

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

894

Ա-9

ԻՆՉ ՎՈՐՈՃԵՑ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ՏԱՄԱՀԱՆԳԵՐՈՐԴ
ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՆ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՔՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՌԱՋՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ. ՄՈՍԿՎԱ, 1927

Գ. ԱԾԿԼԻՆ

ԻՆՉ ՎՈՐՈՅԵՑ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ՏԱՄԱՅԻՆ ՆԳԵՐՈՐԴ
ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՆ

Հ 24526
15686

Թարգմ. Յե. Հրանտ



ԽԱՀՄ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐՈՒԹՅՈՒԹՅՈՒՆ



Напечатана в типографии
Госиздата ССР Армении:
Москва, Армянский пер., 2,
в количестве 3000 экз.
Главлит 64093

XV ԿՈՒՍԿՈՆՑԵՐԵՆՑԻԱՅԻ ՆՇԱՆԱ- ԿՈՒԹՅՈՒՆԸ

Կուսակցության ամեն մի անդամ, ամեն մի բանվոր
ու գյուղացի, պարտավոր և գիտենալ կուսակցության
15-րդ կոնֆերենցիալի վորոշումները, վորոնք վերա-
բերում են մեր յերկրի սոցիալիստական շինարարու-
թյան հետազահաջող ընթացքին:

Դեռ անցյալ տարի կուսակցության 14-րդ համա-
գումարում, մեր կուսակցության մեջ տռաջ յեկավ
ոպպոզիցիոն հոսանք, վորը համաձայն չեր կուսակցու-
թյան կենտկոմի մեծամասնության և վողջ կուսակցու-
թյան տեսակետների հետ: Այդ հոսանքը գլխավորում
ելին կենտկոմի յերկու անդամներ՝ ընկ. ընկ. Զինովյեվ
ու Կամենեվը: Հետագայում այդ ոպպոզիցիան միացավ
ընկ. Տրոցկուն և նրա հետ միասին հարձակում գործեց
կուսակցության կենտկոմի վրա, նրա ճիշտ քաղաքա-
կանության վրա:

Մի քիչ հետո մենք կխոսենք այն տարածայնու-
թյունների մասին, վոր ծագեցին ոպպոզիցիոն ընկեր-
ների փոքրաթիվ խմբակի և կուսակցության մեծամաս-
նության միջև: Իսկ այստեղ մենք կանգ կառնենք
պայքարի այն անթույլատրելի ձևերի վրա, վոր գոր-

ծաղրեց ոպպողիցիան։ Նա՝ հակառակ կուսակցության կանոնադրության, հակառակ կուսակցության դիսցիպլինալի, հակառակ կուսակցության կազմակերպման մասին լենինի տված ցուցմունքների, կուսակցության մեջ սուեղծեց իր ֆրակցիան և այդպիսով, մնալով կուսակցության շարքերում, նրան հակադիր խմբակ կազմակերպեց։ Ոպպողիցիալի ղեկավարներն ու կողմանակիցները, գաղտնի ժողովներ ելին հրավիրում, տարածում ելին կուսակցության համար վնասակար գրականություն, Մոսկվայի և Լենինգրադի բջիջներում առանձին ճառերով մեր կուսակցության կենտրոնի դեմ ելին դուրս գալիս։

Սակայն ամրող Խորհրդավին Միության կուսակցական կազմակերպությունները, Մոսկվայի և Լենինգրադի կուսակցական բջիջները, վճռական հականարդած տվին ոպպողիցիալին։ Կուսակցական կազմակերպությունները, բանվոր կոմունիստները հայտարարեցին, վոր իրենք չեն ուզում կուսակցության կողմից արդեն վճռված հարցերի շուրջը վեճ բաց անել, վոր իրենք դեմ են ոպպողիցիալի քաղաքականությանը, վոր իրենք լերեք չեն համարձակվի խախտել կուսակցության միասնականությունը։

Ամենուրեք պարտություն կրելով, ոպպողիցիալի ղեկավարները հոկտեմբերի 16-ին մի դիմում տվին կենտրոնին, ուր ասված եր, վոր իրենք դադարեցնում են իրենց պայքարը, կուսակցության շարքերը կազմակերպող և պառակտող աշխատանքը, սակայն այնուամենանիվ մնում են հաստատ իրենց նախկին դիրքերում, չեն հրաժարվում իրենց տեսակետներից։ Ահա թե ինչու կուսակցության 15-րդ կոնֆերեն-

ցիան հատուկ նշանակություն է ստանում։ Նա վողջ կուսակցության անունից միանգամ ել ընդգծեց այն վնասակար աշխատանքը, վոր տանում է ոպպողիցիան և արձանագրեց ոպպողիցիալի տեսակետների միանգամայն անհիմն և սխալ լինելը։

15-րդ կոնֆերենցիան մեր կուսակցության պատմության գիրկը կանցնի, վորպես մի կոնֆերենցիա, վորը լենինիզմի վոգով լուծեց կուսակցական և տնտեսական շինարարության խոշորագույն հարցերը։

Կուսակցության և բանվոր դասակարգի առաջ մեծ և դժվարին խնդիրներ են դրված։ Այդ բանը շեշտեց կոնֆերենցիան։ Նա վոչ միայն մեր տնտեսական աշխատանքի վերջին միտարվա արդյունքները հաշվի առավ, այլ և սոցիալիստական շինարարության մի ամրող շրջանի արդյունքները։

15-րդ կոնֆերենցիան հաշվի առավ մեր տնտեսական շինարարության ու վերելքի մի ամրող շրջանի հսկայական աշխատանքները։ Դա, մեր տնտեսության վերականգնումով կուսակցությունն ու բանվոր դասակարգը կարող են պարծենալ։ Տնտեսության վերականգնման դժվարին գործում բանվոր դասակարգը չտեսնված հերոսություն և նվիրվածություն հանդես բերեց։ Նա աշխատեց ու պայքարեց ամենածանր պայմաններում։

15-րդ կոնֆերենցիան աշխատում եր այն միջոցին, յերբ մեր տնտեսությունը վերականգնման շրջանից անցնում է շինարարության նոր շրջանի։ Մեր ամրող տնտեսությունը բարձր տեխնիկալի հիման վրա վերակառուցելու ցուցմունքներ տվեց կոնֆերենցիան։

Նա նշեց, վոր մեր տնտեսության վերականգնման նոր շրջանում, ներքին ու արտաքին խոշորագույն դժվարություններ են կանգնած մեր առաջ։ Միջազգային հարաբերությունների ասպարիզում մենք ապրում ենք տևական դադարի շրջան։ Բայց վոչ վոք մեզանից չի կարող լերաշխավորել, վոր դադարի այդ շրջանը այնքան յերկարատե կլինի, վորքան վոր այդ ցանկանում են մեր կուսակցությունը, բանվոր դասակարգը և աշխատավոր գյուղացիությունը։ Պատերազմի ու խաղաղության հարցերը վոչ միայն մեզանից կախում ունեն, այլև այն կապիտալիստական յերկրներից, վորոնք շրջապատում են մեզ։ Դադարի շրջանը յերկարացնելու համար ամեն կերպ պետք է ամրացնել մեր բանվոր դասակարգի և միջազգական պրոլետարիատի կապը։

15-րդ կոնֆերենցիան մեր կուսակցության պատմության գիրկը կանցնի ներկուսակցական դրության մասին հանած իր պատասխանատու վորոշումներով։ Սոցիալիստական շինարարության ասպարիզում մեր կրած դժվարությունները վորոշ տատանումներ առաջցրին կուսակցության շարքերում։

Այդ առաջին անգամ չի տեղի ունենում։ Նման յերեսութներ պատահել են և անցյալում, կուսակցական կլանքի լուրջ և պատասխանատու մոմենտներում։

15-րդ կոնֆերենցիան աշխատել սկսեց այն ժամանակ, յերբ ոպպոզիցիան արդեն լիակատար պարտություն եր կրել, յերբ բանվորական բջիջներում նա ստացել եր վճռական հարված։

Կոնֆերենցիայում բոլոր վորոշումները միաձաւն ընդունվեցին։ Այդ նշանակում ե, վոր վերջին շրջանում կուսակցությունը միաձուլվել ե,

նրա շարքերը ավելի ու ավելի ամրացել են։

Կոնֆերենցիան փակելիս, ընկ. Ռիկովս ասաց։—

«Կուսակցությունն ու բանվոր դասակարգը իրենց հետև թողին քաղաքացիական պատերազմների, ինտերվենցիաների և քայլայված տնտեսությունը վերականգնելու մի հսկայական պատմական շրջան։ Կուսակցությունն ու բանվոր դասակարգը այդ անցած ամբողջ շրջանում, միանգամայն բացառիկ նվիրվածություն և հաստատակամություն հայտնաբերելով, հեշտությամբ լուծեցին իրենց առաջ դրված խոշորագույն, դժվարին խնդիրները։ Նոր շրջանը մենք թևակոխում ենք ավելի մեծ ուժերով, բանվոր դասակարգի, ամուր դիրքերով, որեցոր աճող նրա ակտիվությամբ, քանակակես ու գաղափարապես ուժեղացած Համամիութենական կոմունիստական կուսակցության շարքերով։ Յեթե անցյալ շրջանում, մեր կուսակցությունն ու բանվոր դասակարգը կարողացան լուծել դժվարին խնդիրները, կարողացան վերացնել բոլոր տատանումները, տատանումներ, վոր տեղի ունեցան բանվոր դասակարգի և կոմունիստական կուսակցության շարքերում, ապա կասկած չի կարող լինել այն մասին, վոր վերականգնման շրջանում ձեռք բերած փորձով և նոր ուժերով, բանվոր դասակարգն ու կուսակցությունը, վոչ պակաս հաջողությամբ կարող են լուծել բոլոր այն նոր խնդիրները, վորոնք այս նոր շրջանում դրվում են կուսակցության առաջ։

«Ընկերներ, մեր կուսակցության մեջ հաճախ ե պատահել, վոր ընկերների այս կամ այն խումբը հեռացել ե կոմունիզմի հիմնական, իսկական ճանապարհոց։ Բայց կարճ ժամանակում ընդունելով իր սխալները, նորից վերադարձել ե ընդհանուր շարքերը միասնական

համերաշխ աշխատանքի համար: Այդ հնարավորությունը
կա նաև ներկա ոպպոզիցիալի համար: Բայց անկախ
գրանից, ոպպոզիցիան այդ կանի թե վոչ, կուսակցու-
թյունը, իր ամբողջ վճռականությամբ, իր ամբողջ հետե-
վողականությամբ, լարված ուժերով պիտի շարու-
նակի լենինիզմի պաշտպանության գործը— Հոկտեմբեր-
յան Հեղափոխության հետագա հաղթական զարգացման
և սոցիալիզմի շինարարության մեծ գործը մեր
էերկրում»:

Այդ հաստատեց կոնֆերենցիան, Յեվ դրա մեջ և
նրա խոշոր նշանակությունը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

կուսակցական կոնֆերենցիան հաշվի առավ այն
ամենը, ինչ մեր յերկրում արված է ժողովրդական
տնտեսության զարգացման ու ամրացման, սոցիալիզմի
շինարարության համար:

Բայց մենք պարտավոր ենք գիտենալ, թե ինչ
ոլոյմաններում են ապրում և աշխատում Խորհրդային
Միության բանվորներն ու գյուղացիները: Մենք
պիտի իմանանք, թե ինչ դրության մեջ են մեզ արջա-
պիտի կապիտալիստական յերկրները: Մենք պիտի
պատող կապիտալիստական յերկրները: Այդ
գիտենանք համայն աշխարհի բանվոր դասակարգի և
աշխատավոր գյուղացիության դրությունը: Պիտի գի-
տական բանվորների և գյուղացիների՝ կապիտալիստ-
ների գեմ մզած պաէքարի մասին, այն մասին, թե
ինչպես և բոլոր յերկրներում դարդանում ու աճում
հեղափոխությունը:

Միջազգային դրության մասին՝ կոնֆերենցիան
լոեց ընկ. Բուխարինի զեկուցումը:
Ի՞նչ է առված այդ զեկուցման մեջ:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Վերջին շրջանում չափազանց շատ խոսվեց ու գրվեց
կապիտալիստական ստարիլիզացիայի մասին:

Ստարիլիզացիա— այդ նշանակում է ամրանալ,
կայունանալ:

Խոկապէս, վերջին տարիների ընթացքում նկատվում
է կապիտալիստական տնտեսության վորոշ ամրացում:
Իմպերիալիստական վերջին պատերազմի ընթացքում,
ինչպես և նրան հաջորդող առաջին տարիներում,
կապիտալիստական զգալիորեն քայլացած տնտեսու-
թյունը ամրացման փաստեր ունի:

Ի՞նչից ե յերեսում այդ ամրանալը:

Ամենից առաջ այդ վկայում են պողպատի, ածուխի
և չուգունի համաշխարհային արտադրության աճումը:

Յերկրորդ՝ զգալի չափով վերականգնված է արտա-
քին առևտրի համաշխարհային շրջանառությունը: Այդ
նշանակում է, վոր կապիտալիստական յերկրները
սկսել են ուժեղ կերպով առևտուր անել իրար հետ,
միմյանց հետ փոխանակելով իրենց սեփական արտա-
դրության մթերքները:

Յերրորդ՝ այն յերկրներում, ուր դրամի արժեքը
շատ ընկել եր պատերազմից հետո, այժմ բարձրացել է:

Այս ամենը խոսում են այն մասին, վոր կապիտա-
լիստական տնտեսությունը մոտենում է նախապատե-
րազման իր աստիճանին: Սական սխալ կլիներ կարծել,
թե կապիտալիստական աշխարհի այդ ստարիլիզա-

ցիան (ամրացումը) կայուն ու մշտական ե:
կապիտալիստական տնտեսության վերականգնումը
առաջ ե գնում աննորմալ կերպով, թոփչքներով, վոր
ցուց ե տալիս այդ վերականգնման անկայունությունը:
կապիտալիստական տնտեսությունը տատանվում է
մեկ այս, մեկ այն կողմ: 1919 թվին ուժեղ անկում
կար: 1920 թվին վերելք: 1921 թվին նորից անկում:
1922—23 թվերին վորոշ վերելք, սակայն այդ նույն
ժամանակ ուժեղ կերպով ընկապ Գերմանիայի տընտե-
սությունը: 1924 թվին վորոշակի անկում: 1925 թվին
վորոշ բարձրացում, վորը սակայն վերջացավ տնտե-
սության վարեջքով (ցածրացում), նախ Գերմանիայում,
ապա Անգլիայում: 1926 թվի առաջին կիսամյակում
մենք նորից նկատում ենք անկում Գերմանիայում և
Անգլիայում:

Ստարիլիզացիայի անհամաշափությունն ու աննոր-
մալ ընթացքը պարզ յերևում է բոլոր յերկրների
տնտեսությունների վոչ միակերպ զարգացումով: Այն
ժամանակ, յերբ մի յերկրում վերելք ե, մյուսում
անկում ե: Որինակի համար, յեթե Ամերիկան արագ
կերպով զարգացնում է իր տնտեսությունը, ապա
Անգլիայում վոչ միայն այդ չկա, այլ և անկում ե
նկատվում—պրոլետարիատի և բուրժուազիայի սուր
պայքար—գործադուլներ: Յեթե դիտենք արևելքը,
ապա նրա ամենամեծ յերկրում—Զինաստանում, կա-
տաղի քաղաքացիական պատերազմ է տեղի ունե-
նում:

Ի՞նչ ենք նկատում կենտրոնական Յեվրոպայում:
կապիտալիստական յերկրներից մեկը դժվարությամբ ե
առաջ ընթանում, իսկ մյուսը հետ է գնում:

Այս բոլորը ցուց ե տալիս, վոր ներկայումս կա-
պիտալիստական տնտեսության համաչափ զարգա-
ցում չկա:

Միաժամանակ մի քանի յերկրներում նկատվում է
կապիտալիստական տնտեսության մինչպատերազմյան
դրության վերականգնում, վոր կատարվում է ժողովը-
դական մասսաների աղքատացումով: Գործարանները
մեծ քանակությամբ ապրանք են արտադրում, իսկ ազ-
գաբնակությունը հնարավորություն չունի այն ձեռք
բերելու, վորի հետևանքով գործարանատերերը կըրճա-
տում են բանվորներին: Այստեղից ել ծայր ե առնում
հնկայական գործազրկություն, իջնում ե բանվորի
աշխատավարձը:

Ահա կոմինտերնի, վորպես համաշխարհացին հեղա-
փոխության շտարի առաջ են կանգնում այս բոլոր
հարցերը, հարցեր, վոր պիտի լուծի կոմինտերնը:

ԶԻՆԱՍՏԱՆԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԱԵՆՏՐՈՆՈՒՄԻ

Զինաստանը իրենից գլխավորապես ներկայացնում է
մի յերկրագործական յերկիր: Գյուղացիական մանր
տնտեսությունների կեսը տիրում է հողի միայն 16 տոկո-
սին, մնացած 84 տոկոսը գտնվում է խոշոր հողատերերի,
կալվածատերերի և գեներալների ձեռքում: Զինաստանի
գյուղացիությունն ընկած է 18 տեսակ հարկերի տակ:
Մի շարք կալվածատերեր խորամանկություն բանեց-
նելով, գյուղացիներից 86 տարվա հարկեր են վերցնում
նախորոք:

Զինաստանում վերջին տարիներն սկսել ե զարգանալ
արդյունաբերությունը: Ներկայումս այնտեղ պրոլետա-

ԲԱՆՎՈՐՆԵՐԸ ՊԱՅՔԱՐԻ ՅԵՆ ԴԻՄՈՒՄ

րիատի թիվը 5 միլիոնի յե հասնում: Գործարանների ու գարբիկանների տերերը հանդիսանում են՝ Զինաստանի, Անգլիայի, Յապոնիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի և ուրիշ լեռների կապիտալիստները: Նրանք շատ անողոք կերպով են շահագործում Զինաստանի բանվորության:

Յեզ ահա, գյուղացիների վրա դրված ծանր հարկերը, հողասակավությունը, բանվորների վատ թար դրությունը առաջ բերին պատերազմ, վոր Զինաստանի ժողովուրդը մղում եռտար կապիտալիստների ու շինացի կալվածատերերի և գեներալների դեմ, վորոնք պաշտպանում են ոտար կապիտալիստների շահերը, հակառակ շին ժողովրդի շահերի:

Այդ մեծ պատերազմը կապիտալիզմին խոշոր հարված կհասցնի:

Կապիտալիստական պետությունները Զինաստանում ունեին հում մթերքներ գնելու շատ եժան շուկա: Նրանք այնտեղ իրենց ապրանքները ծախելու մեծ հնարավություն ունեին: Նրանք Զինաստանում ունեին շատ եժան բանվորական ձեռքեր: Զինաստանը մինչև վերջերս ել հանդիսանում ե կապիտալիստական լեռների համար մի մեծ կթան կով:

Զին ժողովրդի պայքարը, իր ազգային ազատագրության համար, զրկում ե բուրժուական աշխարհին այդ մեծ կթան կովից, չտեսնված ոգուտներից: Բացի դրանից, Զինաստանի ժողովրդի այդ պայքարը առաջ է նից, Զինաստանը ժողովրդի անշված ժողորդում մեծ համակրանք՝ արեվելքի ճնշված ժողորդների մեջ: Յեզ այդ անկեղծ համակրանքն ու ծայր վուրդների մեջ: Յեզ այդ անկեղծ համակրանքն ու ծայր առած ըմբուտացումը նոր վտանգներ են սպառնում կապիտալիզմին:

Կապիտալիստական լեռների տնտեսական դրությունը չեր կարող չազդել բանվորության տրամադրության վրա: Բանվորը հասկանում ե, վոր կապիտալիստական աշխարհի տնտեսության վերականգնումը տեղի յե ունենում իր հաշվին: Կապիտալիստները որեցոր ավելի յեն ուժեղացնում բանվորների անարգ շահագործումը: Այդ բանը նպաստում ե բանվորների համախմբմանը Կոմունիստական կուսակցությունների շուրջը: Բանվոր դասակարգը հետզհետե կորցնում ե իր հավատը դեպի մենշենիկան դեկավարները: Հեղափոխական հոսանքը հարթում ե իր համար ճանապարհ նաև պրոֆմիություններում, վորոնք մինչեւ որս արտասահմանում հանդիսանում են մենշենիկ դավաճանների նեցուկը:

Կապիտալիստական լեռների բանվորները ավելի ու ավելի յեն սկսում հետաքրքրվել մեր Խորհրդային Միությունով: Արդեն բանվորական շատ պատգամավորություններ աջելեցին մեր լեռները: Ամեն մի պատգամավորություն մեր լեռների բանվորներին մոտեցնում ե արտասահմանի բանվորությանը: Մեր հաջողությունները ասում ենին նրանց—գուք ել գնացեք Հոկտեմբերյան Հեղափոխության ճանապարհով: Մեր որինակը արևմտյան լեռների բանվորների մեջ վասում ե ատելության հուրը դեպի կապիտալը և դեպի նրա ծառամենշեվիկները ու մեր լեռները բանվորներին կանչում ե վճռական կոիվների համար:

Գործադուլների ալիքը ավելի ու ավելի յե ծավալվում արտասահմանում:

Բանվորներն սկսում են հասկանալ, վոր առանց

բանվոր դասակարգի շարքերի միացման հնարավոր չի լինի ուժեղ հակահարված տալ անարգ բուրժուազիակին։ Այդ շարքերի միացումը հետզհետե աճում և ամրանում ե, հեռանալով մենշևիկ դավաճան ղեկավարներից։ Իրենք՝ բանվորական մասսաները գնում են այդ ուղիղ ճանապարհով։ Կոմունիստների, անկուսակցականների և ուրիշ կուսակցությունների մեջ գտնվող բանվորների միացումը (պրոֆմիությունների, ֆաբրիկ-գործարանային կոմիտեների և բանվորների «գործող կոմիտեների» միջոցով) ընդհանուր պայքարի համար ընդդեմ կապիտալիստների, — ճիշտ ճանապարհ, փորձված ճանապարհ և հետագայում պետք ե այդ ճանապարհով գնալ։

Կոմունիստական կուսակցությունների խնդիրն ամբողջ աշխարհում այն ե, վոր նրանք շատ սերտ համախմբեն բանվոր դասակարգին իրենց շուրջը։ Բանվոր դասակարգի ամենորյա պահանջներն ու կարիքները, նրա պայքարի ընդհանուր խնդիրները — այս բոլորը պետք ե տեղ գտնի մեր յեղբայրական կոմկուսակցությունների աշխատանքի մեջ։

Կոմկուսակցությունները ամբողջ աշխարհում պետք ե լեռանդուն պայքար մղեն ոպազողիցիոն խմբավորումների դեմ։ Լենինյան ուսմունքի բոլոր տեսակի խեղաթյուրողներին պետք ե տալ ուժեղ հակահարված։

ՊԱՏԵՐԱԶՄԻ Վ.ՏԱՆԴԻՆԵՐԸ ԶԵՆ ԱՆՑԵԼ

Կապիտալիստական աշխարհը հղի յե նոր պատերազմի խոշորագույն վտանգով։ Բուրժուական բոլոր պետությունները անդադար ուժեղացնում են իրենց բանակները, նավատորմը. ավելացնում են իրենց զինված ուժերը։

Յեկ նույն այդ ժամանակ, նրանք խաբում են աշխատավոր մասսաներին, խաղաղության վերաբերյալ իրենց հեքիաթներով և կեղծ հայտարարություններով։ Նրանք, վորպես թե կոնֆերենցիաներ են հրավիրում «զինաթափման», բայց այդ բոլորը անում են աշխատավորությանը կրկին խաբելու համար։ Բուրժուազիակի քաղաքականությունը պաշտպանում են նրա լակել մենշևիկները։ Նրանք ոգնում են կապիտալիստներին խաբելու համար բանվորության և վողջ աշխատավորության։ Կապիտալիստները պատրաստում են նոր պատերազմ։ Նրանք ուժեր են հավաքում, վոր խանգարեն. Խորհրդակին Միության տնտեսական շինարարությունը։

Մեր գլխավոր խնդիրներից մեկն ել այն ե, վոր աշխատավորությանը հասկացնենք, պարզաբանենք գալիք պատերազմների վտանգը։ Մեր յեղբայրական կուսակցությունները Յեվրոպայում և Ամերիկայում պետք ե ամեն որ պատրաստեն բանվորներին և զյուզացիներին, վոր հարմար մոմենտին կարողանան հակահարված տալ կապիտալիստների պատերազմական ձգտումներին։ Այդ աշխատանքը պետք ե զառնա մեր գործնեյության ուղն ու ծուծը։

ՀՈՄՍԾԵԱՐՀԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ ՅԵ

Կապիտալիստական կողմից բանվոր դասակարգի վերաբերմամբ գործադրած ճնշումը իրենց տնտեսության վերականգնման համար, հակառակ հետեւանքներ ե ունենում։ Այդ չտեսնված ճնշման հետեւանքով ըմբռատացումն ու հեղափոխական տրամադրությունները

բանվոր դասակարգի մեջ ամրանում ու զարգանում են. դա հատկապես նկատվում է Անգլիայում և Զինաստանում: Ներկայումս այդ լերկու լերկում համաշխարհային կարևորություն ունեցող անցքեր են կատարվում: Կապիտալիստական ստարիլի զացիան լերկու խորը անդունդ ունի—Անգլիա և Զինաստան:

Համաշխարհային հեղափոխությունը ներկայումս ընթանում է լերեք գլխավոր ուղղությամբ. սոցիալիզմի կառուցումը Խորհրդային Միության սահմաններում, անգլիական բանվորական շարժումը և Զինաստանի ազգային ազատագրական պայքարը:

Յերեք գլխավոր ուղղություններով զարգացող այդ ուժերը գնալով ավելի և ավելի վճռական են դառնում: Նրանց և վիճակված վերջնական հաղթանակը:

Այսպես ասաց կոնֆերենցիան մեր միջազգային դրության մասին, վորից հետո անցավ տնտեսական հարցերին:

Ի՞նչՊԵՍ ԵՆՔՎԱՌՈՒՑԵԼ ՅԵՎ Ի՞նչՊԵՍ ՊԻՏԻ ԿԱՌՈՒՑԵՆՔ ՄԵՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Այս հարցը կոնֆերենցիայի կարևորագույն հարցերից մեկն եր, վորի մասին լսվեց ընկ. Ռիկովի մանրամասն զեկուցումը: Հստ եյության արտահայտվեցին 30 պատգամավոր:

Տեսնենք թե ինչ ասաց կուսկոնֆերենցիան մեր տնտեսական շինարարության անցած շրջանի և առաջիկա անելիքների մասին:

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱԿԱՆԳՆԵՐՈՒՄ

Հոկտեմբերյան հեղափոխությունից անցավ 9 տարի: Այդ անցած տարիներում Խորհրդային Միության տնտեսությունը արագ թափով վերականգնել է, և 10-րդ տարվա շեմքին, մեր արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը հասել են նախապատճերազմյան աստիճանին ու նրանից նույնիսկ անցել:

Ցանքսերի տարածության չափը և գյուղատնտեսության ընդհանուր լեկամուտը ներկայումս հետ չեն մնում նախապատճերազմյան աստիճանից: Բոլոր ֆարմիկաներն ու գործարանները, վոր հնարավոր եր գործի դնել, աշխատում են: Շինարարության մի քանի ճյուղերում, ինչպես, որինակ՝ ելեկտրիֆիկացիայում վերելքն այնչափ խոշոր է, վոր ելեկտրոտեխնիկական արդյունաբերությունը անցել և նախապատճերազմյան աստիճանից:

Հեղափոխության առաջին տարիներին մեր արդյունաբերությունը վնաս եր բերում: Նրա վերականգնման համար պահանջվող ծախսերը (վոր անհրաժեշտ ելին գործարանների կահավորման, փոփոխման և նորոգման համար) ավելի շատ ելին, քան այն լեկամուտը, վոր տամա եր արդյունաբերությունը: Բայց արդեն 1923—24 թ. մեր արդյունաբերությունը 63 միլիոն զուտ ոգուտ տվեց, հետագա 1924—25 թվին արդյունաբերության ոգուտն արդեն հասնում է 295 միլիոն ոուրլու, իսկ 1925—26 թ. 375 միլիոնի:



Արդյունաբերության պահպանման ու վերականգնման համար, առաջին տարիներում պետությունն ստիպված եր ժողովրդական տնտեսության այլ ճյուղերից զգալի միջոցներ վերցնել և այդ տնտեսական քաղաքականությունը այսոր արդեն տալիս է իր պտուղը. Եթեք տարվա ընթացքում մեր արդյունաբերությունը 733 միլիոն դուշ ոգուշ ունեցավ:

Մեր յերկրի տնտեսական զարգացման հետագարնթացքը չի կարելի պատկերացնել, առանց արդյունաբերական լայն շինարարության. Մինչեւ հիմա մեր արդյունաբերությունը զարգացել և գլխավորապես առաջվանից մնացած գործարանների կահավորման հաշվին: Հենց զրա համար ել հնարավոր եր մեր արդյունաբերության արտադրանքի այդ խոշոր աճումը: Հերիք ե միայն հիշել վոր անցյալ տարի մեր արդյունաբերության արտադրանքը աճել է 60 տոկոսով, իսկ այս տարի անցյալ տարվա համեմատությամբ՝ 40%-ից անցել է:

Այս տարվանից սկսած արդեն, մենք չենք կարող նկատի ունենալ այլևս նման արագ աճում, քանի վոր մեր կողմից չոգտագործված գործարանային կահավորումը շատ պակասել եւ հինը ոգտագործելու շատ քիչ բան ունենք: Այս տարի արդեն արդյունաբերության արտադրանքի աճում սպասվում է 17—18 տոկոսով: Սակայն դա ել խոշոր աճում է, համեմատած մյուս յերկրների հետ. որինակ յեթե վերցնենք Ամերիկան, նրա արդյունաբերության աճումը, ապա կտեսնենք, վոր 1909 թվից մինչև 1913 թիվը, յուրաքանչյուր տարվա աճման տոկոսը չորսից չի անցնում:

Մեր արդյունաբերությունը հետագայում զարգաց-

նելու համար, արդյունաբերական շինարարության ասպարիզում հետ չմնալու համար, անհրաժեշտ ե վոչ միայն հին գործարանները վերականգնել, այլ և ոկտել արդյունաբերական նոր ձեռնարկությունների լայն շինարարություն: Դրա համար հսկայական գումարներ են պետք, վորի պատճառով, նոր գործարանների կառուցումը այն թափով չի գնա ու այն արդյունքները չի ունենա, ինչ վոր եր մինչեւ հիմա: Յեթե մենք յենթադրում ենք այս տարի արդյունաբերական շինարարությանը հատկացնել մի միլիարդ ռուբլի, ապա դրանից մենք ոգուտ կտանանք միայն մի քանի տարուց հետո՝ յերբ, նոր կահավորված, սարքավորված և նոր շինած ձեռնարկությունները կտան ապրանք արտադրել:

Կոնֆերենցիան շեշտեց, վոր շնորհիվ կուսակցության վարած տնտեսական ճիշտ քաղաքականության, մեր յերկիրն ավարտեց ժողովրդական տնտեսության վերականգնման հսկայական աշխատանքը:

Հիմա արդեն ժողովրդական տնտեսությունը թևակոխում է իր զարգացման նոր շրջանը—տնտեսությունը բարձր տեխնիկայի հիման վրա վերակառուցելու շրջանը:

ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼԻԶԱՑԻԱ

Վորոնք են մեր յերկրում ժողովրդական տնտեսության շինարարության, սոցիալիզմի շինարարության հետագա խնդիրները:

Հիմնական խնդիրը—արդյունաբերության հետագա զարգացումն ե—ինդուստրիալիզացիան.

Սակայն չե վոր դրա համար հսկայական գումարներ

են պետք: Վարտեղից վերցնել այդ գումարները:
Արդյունաբերության զարգացման համար միջոցներ
տրամադրելու մենք յերեք հիմնական տղբյուր ունենք.
1) արդյունաբերության մեջ կատարված կուտակումը,
այսինքն՝ մեր ձեռնարկությունների տված ողուտը,
2) տնտեսության մյուս ճյուղերում կուտակված միջոց—
ները արդյունաբերության հատկացնելով. որինակ, պե-
տության ստացած հարկալին յեկամուտները, 3) ազգա-
րնակության կատարած խնայողության ոգտագործումը:

Ազգաբնակության կատարած խնայողությունները
ոգտագործելու տեսակետից, մենք չափազանց հետ ենք
մնացել նախապատերազմյան շրջանի դրության հետ հա-
մեմատած: 1925—26 թվին, խնայողական դրամարկղնե-
րում մուծած գումարը թեև հասնում է 90 միլիոն ռուբլու,
սակայն նա կազմում է նախապատերազմյանի միայն
6 տոկոսը: Աշխատանքի այդ սսպարիզի վրա հետա-
գայում մեծ ուշադրություն պիտի դարձնենք, քանի
վոր ինդուստրիալիզացիայի համար գումարներ կուտա-
կելու հիմնական միջոցներից մեկը դա չե:

Կուտկոնֆերենցիան միանգամ ել հիշեցրեց ու շեշտեց,
վոր առաջիկա տարիներին մեր հիմնական խնդիրը—
մեր տնտեսության ինդուստրիալիզացիան ե:
Այդ նշանակում ե վոր արդյունաբերությունը
մեր տնտեսության մեջ գլխավոր տեղ պիտի
գրավի, վոր արդյունաբերությունը ինքն
իր համար պիտի արտադրի մեքենաներ,
արտադրության միջոցներ: Միաժամանակ այդ
նշանակում ե, վոր մեր գյուղատնտեսությունն և
պիտի գարգանա արդյունաբերության հիման վրա:

Խոչպես ընկեր Ռիկովս ասաց, մեզ համար կարենը

վոչ միայն նախապատերազմյան ցանքսերի տարածու-
թյանը և անասունների քանակին հասնելն ե, այլ և
«ոգնել չքավորին և միջակին յուրացնելու Հոկտեմբերի
նվաճումները»: Իսկ հեղափոխության շնորհիվ ձեռք
բերված հողը ոգտագործելու և նրանից ոգտվելու
համար, անհրաժեշտ է մեքենա և տրակտոր—այսինքն՝
գյուղատնտեսության ինդուստրիալիզացիա:

Գյուղացուն անհրաժեշտ են լավ գործիքներ, լավ
մեքենաներ, վորպեսզի նա կարողանա ավելի շատ և
ավելի լավ մթերքներ արտադրել: Վոչ միայն հաց
արտադրել: Այլ և հում նյութ արդյունաբերության
համար: Մեզ մոտ ապրանքների պակաս ե, ապրան-
քացին սով ե, վոչ միայն նրա համար, վոր գեռ քիչ և
վատ աշխատող գործարաններ ունենք, այլ և նրա հա-
մար, վոր պակասում ե արդյունաբերության համար
հում նյութ—պակասում ե կաշի և բուրդ:

Ուրեմն գյուղացուն անհրաժեշտ է ինդուստրիա-
լիզացիա: Զե՞ վոր ինդուստրիալիզացիան նրան կտա
շատ մեքենաներ, ավելի շատ կսպառի նրա հում
նյութը, գյուղական ավելորդ ձեռքերը—գործի կղնի
և հնարավորություն կտա չքավորին վոտքի կանգնելու:
Միաժամանակ ինդուստրիալիզացիան կրավարարի նրա
պահանջները, նրան արդյունաբերական ապրանքներ
կրոա: Կոնֆերենցիան շեշտեց և այն հանգամանքը, վոր
գյուղացին չպետք է մի կողմ նստի և սպասի ինդուս-
տրիալիզացիայի գալուն: Պետությունը տարեց-տարի
ավելի ու ավելի շատ միջոցներ ե կուտակում
արդյունաբերության, ինդուստրիալիզացիայի համար:
Ահա միջոցների այդ կուտակման գործում, գյուղացին
կարող ե և պետք ե ոգնի պետությանը:

Մեր գյուղատնտեսությունը արդեն հասել է նախապատերազման աստիճանին: Իսկ ինայողական դրամարկղներում գյուղացիության կատարած ինայողությունները, ինչպես և կոռավերացիալի համար մուծած գումարները, դեռ շատ հեռու յեն նախապատերազման աստիճանից: Այսպես, որինակ, գյուղացիության կատարած ինայողությունները, բոլոր ինայողական դրամարկղներում միասին կազմում են 2 և կես տոկոս, համեմատած մյուս խավերի ինայողությունների մեջ, գյուղացիության ինայողությունը 28 տոկոս երկազմում:

Ճիշտ ե, գյուղացին դեռ բավարար չափով չի գոյացնում իր պահանջները և հաճախ այդ լինում ե ապրանքի պակասության հետևանքով: Գյուղացին դրամը պահում ե սևորվա համար: Ահա այդ դրամները, ինչքան ել վոր չնշին լինեն, պետք ե մուծվեն ինայողական դրամարկղները և վարկային ընկերությունները: Այդպիսով ինդուստրիալի գացիալի համար միջոցներ կկուտակվեն:

Գյուղացիությունը դեռ շատ քիչ ե մտածում այդ կուտակման մասին: Իսկ չե՞ վոր կոպեկներից միլիոններ են հավաքվում: Չե՞ վոր թագավորի ժամանակ ինայողական դրամարկղներում մի քանի հարյուր միլիոն եր հավաքված, իսկ մեզ մոտ՝ 1925-26 թ. հավաքված ե միայն 90 միլիոն:

Սևորվա համար պահած ու խնայած ամեն մի կոպեկը, ամեն մի ոռուրին պիտի մուծել ինայողական դրամարկղը: Ահա այս և յերկրի ինդուստրիալիզացիալի համար գյուղացիության ցուց տալիք ովնության ճանապարհը:

Հետեւալ հիմնական խնդիրը, վոր պիտի հիշենք և հոգ տանենք, դա արդյունաբերական արտադրության տեխնիկայի բարձրացումն եւ:

Այդ ասպարիզում մենք շատ հետ ենք մնացել մյուս յերկրներից: Պատահում ե, վոր արտասահմանում մեր պատվիրած մեքենաները կամ հին, մաշված են լինում և կամ անկարելի յե լինում նրանց գործի դնել:

Ահա այդ տեխնիկական թերությունները մենք պարտավոր ենք վերացնել:

Միաժամանակ, արդյունաբերական տեխնիկայի առաջարիզում, պետք ե այնպես անել, վոր մենք արտասահմանից կախումն չունենանք. մեր արդյունաբերության համար անհրաժեշտ մեքենաները պետք ե ինքներս մեր յերկրում պատրաստենք: Պետք ե զարկ տանք մեքենաների շինարարության գործին մեր յերկրի ներսում, ընդարձակելով և ուժեղացնելով այդ աշխատանքը:

Մեզանում թույլ ե վառելիքի, ելեքտրական ուժի և տրանսպորտին անհրաժեշտ իրերի արտադրությունը: Բայց արդյունաբերության այդ ճյուղերումն ել մենք նվաճում ունենք:

Քարածուխի արդյունաբերությունը անցնում է նախապատերազման աստիճանից: Միայն Դոնբասը վերջին յերկու տարվա ընթացքում իր արտադրությունը ավելացրել ե մի միլիարդ փթով: Յեվ չնայած դրան, չնայած ածուխի և նավթի շրջաններում կատարվող լարված աշխատանքին, վառելիքի պակաս ե զգացվում:

Մեր ելեքտրաշինարարության ծրագիրն իրագործում ե և այդ տեսակետից մենք հետ չենք մնում: Սակայն այստեղ ել ելեքտրական ուժի պահանջն ու սպառումը ավելի արագ են աճում, քան նրա արտադրությունը:

Իսկ առանց բավարար քանակի վառելիք և ելեք-
տրական ուժ ունենալու, անհնարին և արդյունաբե-
րության մյուս ճյուղերի զարգացումը, և հենց դրա
համար եթ առաջին հերթին ելեքտրաշինարարության
զարգացման և վառելիքի պաշարն ընդլայնելու համար
գումարներ են հատկացվում: Բացի այդ՝ մեծ ուշադրու-
թյուն պիտի դարձնել տրանսպորտի վրա: Թեև յերկա-
թուղային փոխադրումներն իրենց քանակով անցել են
նախապատերազման աստիճանից, բայց և այնպես,
տրանսպորտը դեռ վնաս է տալիս: Պետք է հոգ տանել,
վորպեսզի շահավետ փոխադրումների թիվն ավելացվի և
ընդհակառակը, վնաս բերող փոխադրումները կրճատվեն:

Իսկուստրիալիզացիայի ուղիներն ու կուտակման
միջոցները նշելով, կոնֆերենցիան վճռական կերպով
շեշտեց, վոր ոպպոզիցիայի առաջարկները այդ ասպա-
րիզում ել վնասակար ու կործանարար են: Կոնֆերեն-
ցիան՝ դատապարտեց հարկերն ավելացնելու և արդյուն-
նաբերական ապրանքների գները բարձրացնելու ծրա-
գիրը, վոր առաջարկում եր ոպպոզիցիան: Զե՞ վոր հարկե-
րի ու գների բարձրացումը անխուսափելիորեն կթուլաց-
նելին և անգամ կդադարեցնելին գյուղատնտեսության
զարգացումը, կրճատելին արդյունաբերության ան-
հրաժեշտ հում նյութերն ու սպառման շուկան, վորն իր
հերթին խիստ կերպով կազդեր ինդուստրիալիզացիայի
թափի վրա: Իսչպես հայտնի յե, ոպպոզիցիան առա-
ջարկում է ավելի արագ թափով զարգացնել մեր ար-
դյունաբերությունը, վորի համար, նրա կարծիքով,
գյուղացիության վրա դրվող հարկերը պիտի ավե-
լացնել և արդյունաբերական ապրանքների գները
բարձրացնել: Ոպպոզիցիայի այդ առաջարկի քաղա-

քական ու տնտեսական վտանգը պարզ է:

Ոպպոզիցիայի առաջարկի հիմնական սխալն այն է,
վոր նա-իրարից չի տարբերում մասնավոր կապիտա-
լիստական տնտեսությունը և գյուղացիական տնտե-
սությունը, նրա կարծիքով, դրանք յերկուսն ել նույն
բաներն են: Ոպպոզիցիան ամենաին չի հասկանում,
վոր թեև մեր գյուղացիական տնտեսությունները
մասնավոր են, բայց նրանք կապիտալիստական չեն:

Ճիշտ է, գյուղացիական տնտեսությունների վորոշ
մասը կարող է հավասարվել կապիտալիստական տնտե-
սություններին, սակայն վոչ բոլորը, այլ միայն կուլա-
կային խոշոր տնտեսությունները: Վերջինների թիվը
միայն մի քանի տոկոս է կազմում մեզանում: Միթե
կարելի յե այստեղից յեզրակացնել, վոր գյուղացիական
բոլոր տնտեսությունները մասնավոր կապիտալիս-
տական են:

Պարզ է, վոր չի կարելի: Ոպպոզիցիան չի հասկացել
այն, ինչ ասել ե լենինը գյուղացիության մասին:

Լենինը մեր կուսակցությանը սովորեցրել է, վոր
գյուղացիությունը կարող է և պետք է լինի բանվոր
դասակարգի դաշնակիցը, թե հեղափոխության միջոցին և
թե սոցիալիստական շինարարության ժամանակ:

Հենվելով չքավորների վրա և զանակցելով միջակ-
ների հետ, բանվոր դասակարգը պիտի ոգնի նրանց,
գյուղացիական տնտեսությունը աստիճանաբար վերա-
կառուցելու, սոցիալիստական տնտեսության բարձր
ձևերով տանելու համար: Դրա համար լենինը ճանա-
պարհ ցուց է տվել: Այդ ճանապարհը կոռպերացիան է:
Մեր կուսակցությունը և վոչ մի հիմք չունի կասկա-
ծելու լենինի ցուց տված այդ ճանապարհի ճշտության

վերաբերյալ. կյանքն ամեն քաղաքոխում հաստատում
է այդ ճանապարհի ճշությունը:

Կոռպերացիան այն ուժու է, վորի միջոցով բանվոր
դասակարգն ու չքավոր գյուղացիությունը պայքարում
են կուլակների դեմ:

Կոռպերացիան գյուղացիական սակավազոր տնտե-
սությունների բարձրացման միջոց է: Կոռպերացիան,
այն կամուրջն է, վորի վրայով գյուղացիական թուվ
մանր և բաժան-բաժան լեղած տնտեսությունները
դեպի սոցիալիզմ պիտի դիմեն:

Լենինը մեր կուսակցությանը սովորեցրել է, վոր
գյուղացիական տնտեսությունը պետք է աստիճանա-
բար վերամշակել, վերակառուցել: Յեկ մեր հեղափոխու-
թյան ու կուսակցության ամբողջ ուշադրությունը
կենտրոնացած է այդ ուղղությամբ: Ամեն կերպ մենք
պետք է նպաստենք գյուղացիության կոռպերացման
գործին, բազմակողմանի կերպով ոժանդակելով այդ
աշխատանքին: Միայն այդ կերպ մենք կհաղթահարենք
բոլոր դժվարությունները:

ԱՆՀՐԱԺԵՇՏ Ե ՊԼԱՆ

Մեր արդյունաբերական շինարարությունը ճիշտ
տանելու և համապատասխան միջոցները հաշվով ու
խնայողությամբ ծախսելու համար, անհրաժեշտ է
խստորեն ծրագրված պլանավիճ աշխատանք կատարել:
Այս հարցի վրա կանգ առնելով, կոնֆերենցիան հա-
մապատասխան ցուցմունքներ տվեց մեր արդյունաբե-
րության ղեկավարներին: Զե՞ վոր առանց պլանի մենք
չենք կարող մեր յերկրի ինդուստրիալիզացիայի գործն
իր իսկական ճանապարհի վրա դնել: Մեր արդյունա-

բերության տարրեր ճյուղերի զարգացման մեջ անհա-
մաչափություն չպետք է լինի: Պետք է այնպես
անել, վոր արդյունաբերության մի ճյուղը չծանրա-
բեռնվի, իսկ մի ուրիշը՝ հետ մնա: Անհրաժեշտ է հաշվի
առնել մեր ունեցած հում նյութի պաշարը և ըստ այնմ
ել բոլոր ֆաբրիկաներն ու գործարանները գործի
դնել: Ավելորդ, անտեղի գործարաններ չպետք է շինել,
յերբ նրանց համար հում նյութ չկա: Չպետք է կրկնվի
այն, յերբ մի քանի նահանգներ, առանց վորեւ պլանի,
կապարաշպարի գործարաններ ելին շինել և հետա-
գայում, հում նյութի պակասության պատճառով, ստիպ-
ված ելին գործարանները կանգնեցնել: Այս որինակն
ասում է, վոր մեր բոլոր հնարավորությունների ու
միջոցների գործադրման խիստ պլան պիտի ունենանք:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՄԸ ՑԵՎ ԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՌԵՖԻՄԸ

Կուսկոնֆերենցիայի բանաձեկ մեջ ասված է.—

«Մեր յերկրի ինդուստրիալիզացիան անհնար է
առանց խնայողության ոեժիմի խիստ ու անսալթաք
կիրառման: Վողջ կուսակցության ու բոլոր խորհրդա-
տին մարմինների վողջ ուշադրությունը պիտի կենտ-
րոնանա ավելորդ ու անպետք ծախսերը վերացնելու
գործի վրա:»

«Խնայողության ոեժիմի հաջող և ճիշտ կիրառ-
ման անհրաժեշտ պայմանը բանվորական լայն մաս-
սաների մասնակցությունն է այդ գործին: Խնայողու-
թյան ոեժիմի հաստատ կիրառումը կարող է և պետք է
մեր յերկրի ինդուստրիալիզացիայի համար միջոցներ
ստեղծի:

«Կոնֆերենցիան շեշտում է, վոր խնայողության ռեժիմի կիրառման միջոցին լերենն տեղի լին ունեցել կուսակցական հրահանգի աղավաղումներ, վորոնք իրենց արտահայտությունը գտել են նրանում, վոր մի շարք տնտեսավարներ կրճատել են բանվորությանն անհրաժեշտ պիտույքներ։ Խնայողության ռեժիմի այդպիսի աղավաղման դեմ պետք է վճռական պայքար մղել և աղավաղման նոր փորձերը արմատից կտրել»։

Ահա արդեն մի տարուց ավելի լե, ինչ մենք մեր լերկրում կիրառում ենք խնայողության ռեժիմը։ Նա արդեն տվել է իր զգալի արդյունքները։ Ավելորդ ու անպետք ծախսերը կրճատելով, մենք արդեն կարողացել ենք խնայել մի քանի հարյուր հազար ռուբլի։ Այդ խնայված գումարները հատկացված են մեր արդյունարերության ուժեղացմանը, մեր լերկրի ինդուստրիալիզացիային։ Հետագայում մենք պիտի շարունակենք խնայողության ռեժիմի կիրառման աշխատանքը ավելի հաստատ ու վճռական։ Զե՞ վոր մեզանում դեռ շատ ավելորդ ու անտեղի գումարներ են ծախսվում։

Կոնֆերենցիան նույնպես շեշտեց, վոր պետական ու տնտեսական համապատասխան մարմինները պարտավոր են բարելավել արտադրության կազմակերպման և արդյունարերության դեկավարման աշխատանքը, խոշոր չափերով կրճատելով վարչական ծախսերը։ Անհրաժեշտ է խիստ խնայողության և միջոցների կուտակման միջոցով, խոշոր չափերով ավելացնել մեր արդյունարերության արտադրանքը, այն վորակապես բարձրացնել ու եժանացնել։

Խորհրդային Միության բանվորներն ու գյուղացիները պետք են ոգնեն կուսակցությանն ու իշխանու-

թյանը, այդ ամենն իրագործելու համար։ Ժողովրդական միջոցների խնայում, ծախսերի կրճատում, արտադրանքի վորակի լավացում— այս բոլորը կարելի են ձեռք բերել աշխատավոր մասսաների ակտիվ մասնակցությամբ։ Ընթացիկ տնտեսական տարվա խնդիրները նշելով, կոնֆերենցիայի բանաձեն ասում են—

Ընթացիկ տնտեսական տարում, կուսակցության ու իշխանության դեկավարությամբ, արդյունարերության համար պիտի ոգտագործել բոլոր հնարավորությունները՝ արդյունարերության արտադրանքը խոշոր չափերով ավելացնելու, արդյունարերական ապրանքների պակասը վերացնելու և ընդհանուր ապրանքաշրջանառությունն առողջացնելու։ Այդ խնդիրն իրագործելու համար, ներքին շուկայի հում նյութը կազմակերպված ու խոշոր չափերով ոգտագործելուն զուգընթաց, փոքրիկ հնարավորության դեպքում, պետք է ավելացնել արտասահմանյան հում նյութի ներմուծումը։ Արտադրության լայնացման հնարավորությունը նախ և առաջ պիտի փնտռել արդյունարերության աշխատանքի լավացման մեջ— տեխնիկական նվաճումներ, բանվորական ուժի կազմակերպում, աշխատանքի արտադրողականության բարձրացում և վերադիր ծախսերի կրճատում։

Ի՞նչ է ասում այս վորոշումը։ Այս վորոշումն ասում է, վոր կուսակցությունն ու իշխանությունը պիտի պայքարեն ապրանքային սովոր դեմ։ Միաժամանակ այս վորոշումն ասում է, վոր արդյունարերությունը ազգարնակությանը ավելի շատ ապրանքներ պիտի տա, վորպեսզի մեզ մոտ չթի, մեխի, լերկաթի, գյուղատընական գործիքների և այլ ապրանքների սուր կարիք չինի։ Այդ նպատակի համար, բարելավենք մեր

գարբիկաների և գործարանների աշխատանքը։ Այդ
նպատակով, ըանվորները կլավացնեն ու կրարձրացնեն
իրենց աշխատանքը։

ԲԱՆԳՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՈՒ ԴՅՈՒԴԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղացիությանը և գյուղատնտեռական քաղաքա-
կանությանը վերաբերող հարցերը զգալի հարվածների
լենթարկվեցին ոպպոզիցիալի կողմից։ Ընկերների մի
մասը այն տեսակետն էր առաջադրում, վոր ամենից
տուաջ մենք պետք ե խոշոր գումարներ մտցնենք
գյուղացիական տնտեսության մեջ և ըստ այնու զար-
գացնենք մեր ինդուստրիան։ Մյուս տեսակետը բոլո-
րովին հակառակն է ասում։ Ըստ այդ տեսակետի, մեր
ինդուստրիալի զարգացման համար անհրաժեշտ միջոց-
ները պետք ե մեծ չափերով վերցնենք գյուղացիու-
թյունից ու գյուղատնտեսությունից։ Այդ յերկու տեսա-
կետներն ել մերժվեցին կուսակցության կողմից։ Մեր
ինդուստրիալի (արդյունաբերության) և գյուղատնտե-
սության միջև սերտ կապ պետք ե լինի։ Յեթե արդյու-
նաբերության զարգացման համար անհրաժեշտ ե գյու-
ղատնտեսության զարգացումը, ապա մյուս կողմից ինքը՝
գյուղատնտեսությունն ել շահագրգուված ե արդյունա-
բերության զարգացումով։ Հերիք ե հիշել այնպիսի մի
յերևութ, վորպիսին ապրանքալին սովոր։ Քիչ ապրանք
կա, վորովհետև պակասում ե հում նյութը։ Ապրանքալին
սովի վերացումը զգալի չափով կախված ե տեխնիկա-
կան կուլտուրաների ցանքսերի տարածության ընդ-
լայնումից։

Վերջերս վիճաբանությունների նյութ ծառայած
հարցերին և վերաբերում նաև գյուղացիության շեր-

տավորման հայրը։ Ոպպոզիցիան հաստատում է, վոր
գյուղացիության շերտավորման մասին յեղած տվյալ-
ները ցուց են տալիս մինչհեղափոխական շրջանի գյուղի
կապիտալիստական զարգացման ու հարաբերություն-
ների վերականգնում ներկայումս։ Այդտեղից ել յելնելով,
ոպպոզիցիան առաջարկում է ավելացնել հարկերը։
Ոպպոզիցիան իրար հետ շփոթում է մասնավոր կապի-
տալիստական և գյուղացիական տնտեսությունները,
տարբերություն չդնելով նրանց միջև։ Ոպպոզիցիան
ուղեցնում ու մեծացնում է գյուղի շերտավորման աս-
տիճանը։ Նա ասում է, վոր կուլտակալին տնտեսություն-
ների քանակը անչափ աճում է։ Ոպպոզիցիան չի տես-
նում գյուղացիության բացարձակ մեծամասնությանը—
միջակներին։ Զե՞ վոր ոպպոզիցիալի առաջարկած հար-
կերի ավելացումը անխուսափելի կերպով պիտի դիպչի
նաև միջակ տնտեսություններին։

Ոպպոզիցիան այդպիսի սխալ առաջարկներ և անում
նրա համար, վորովհետեւ ճիշտ չի ըմբռնում գյուղա-
ցիության ու բանվոր դասակարգի փոխհարաբերու-
թյունը և սխալ ե գնահատում ներկա տիրող դրությունը։

Վեճ չի կարող լինել այն մասին, վոր ազգաբնա-
կության բոլոր խավերն ել պետք ե մասնակցեն մեր
արդյունաբերության զարգացման գործին։ Մեր արդյու-
նաբերությանը վիճակված ե պատմության մեջ չտեսնված
գեր խաղալ։ Հանդիսանալով սոցիալիստական արդյու-
նաբերություն, նա ոգնում է մեր ամբողջ ժողովրդական
տնտեսությունը սոցիալիստականի վերածելու համար։

Ինչպես ե իրականում տեղի ունենում գյուղի
շերտավորումը։ Յեթե մենք վերցնենք գյուղացիական
տնտեսությունների փոփոխման մասին յեղած տվյալ-

ներն ըստ ցանքսերի տարածությունների, հետևյալ պատկերը կստանանք. մինչդեռ 1922 թվին, ցանքս չունեցող տնտեսությունները կազմում են 7 տոկոս, 1923 թվին նրանց թիվը պակասում է և հասնում 5 տոկոսի, 1924 թվին՝ $4\frac{1}{2}$ տոկոս և 25 թվին՝ 4 տոկոս։ 1922 թվին մինչեւ յերկու դեսպատին ունեցող տնտեսությունները, բոլոր տնտեսությունների 46 տոկոսն ենին կազմում, 1923 թվին՝ $40\frac{1}{2}$ տոկոս և 1924 թվին՝ 36 տոկոս։ Այսպիսով, մենք տեսնում ենք, վոր տարեց-տարի պակասում է ցանքս չունեցողների և սակավորների թիվը։ Միաժամանակ ավելանում են միջակ տնտեսությունները։

Մոտավորապես նույն պատկերը կստանանք, յեթե գյուղացիության շերտավորման հարցը քննենք ըստ տընտեսությունների ունեցած անասունների քանակի։ Այս բոլոր տվյալները վկայում են, վոր միջակ գյուղացիական խավի անկում չկա, այլ կա միջակ տնտեսուկան խավի անկում չկա, այլ կա միջակ տնտեսությունների ընդհանուր վերջելք ու ամրացում։ Ոպպոթյունների այն պնդումը, թե մեր գյուղացիական քաղաքիցին այն պնդումը, թե մեր գյուղացիական քաղաքականությունը գյուղի կուլակ տարերին անձնատուր քականություն ե, —լիովին հերքվում է գյուղացիության շերտավորման, ինչպես նաև գյուղում տարվող մեր հարկացին և ընդհանուր քաղաքականության վերաբերյալ ունեցած տվյալներով։ Ոպպոթյունն ասում է, վոր մեզ մոտ հարկացին սիսալ քաղաքականություն ե կիրառվում, այնպիսի քաղաքականություն, վորը նպաստում է կուլակ խավերի ամրացմանը գյուղում։ Վարն ե մեր հարկացին քաղաքականության հիմքը գյուղում։

Այն, վոր ամբողջ գյուղատնտեսական հարկի $47\frac{1}{2}\%$

մուծում ե գյուղի կուլակային վերնախավը, վոր հարկը իր ամբողջ ծանրությամբ ընկած է կուլակների և ունեսությունների վրա, վորոնք գյուղացիության 15 տոկոսն են կազմում։ Հետո այն, վոր գյուղատնտեսական հարկից բոլորովին ազատված է գյուղացիության քանակներից մինչև յերեսուն տոկոսը, այսինքն չքավոր տնտեսությունների բացարձակ մեծամասնությունը։

Իհարկե, կարելի յե վիճել այն մասին, թե արդյոք բավարար է մեր կողմից սահմանված հարկը։ Սակայն, մի շարք հանգամանքներ նկատի առնելով, կարելի յե պնդել, վոր դժվար թե հնարավոր է գյուղատնտեսական հարկի հետագա բարձրացումը և ավելացումը։ Յեթե այդպես վարվելինք, վտանգած կլինելինք բանվորացուղացիական դաշինքը։ Գյուղացիությունը շահագրգության մեր արդյունաբերության վերելքով ու զարգացումով։ չե՞ վոր՝ վորչափ արագ առաջ գնա մեր արդյունաբերությունը, այնչափ ավելի շատ ու եժան ապրանք կտանք գյուղին։ Ինչքան արագ մեր արդյունաբերությունը առաջ գնա, այնչափ ավելի շատ կարող ենք մենք ոգնել չքավորին բարձրացնելու իր տնտեսությունը։

Արդյունաբերության զարգացումը նպաստում է զանազան տեխնիկական կուլտուրաների՝ մեր գյուղատնտեսության մեջ հում նյութերի զարգացմանը, բարձրացնելով գյուղատնտեսության մակարդակը։

Հենց դրա համար ել մեր կուսակցությունը կիրառում է ինդուստրիալիզացիայի քաղաքականությունը, ամեն կերպ նպաստելով մեր արդյունաբերության զարգացմանը։ Դրա համար ել մենք ասում ենք. բանվորը, գյուղացին և ազգաբնակության մլուս խավերը պետք ե

մեր ինդուստրիալիզացիայի գործում իրենց բաժին ընկածը կատարեն: Մենք ավելացրինք հարկերը մասնավոր կապիտալի և նրա յեկամուտի վրա:

Կուսակցության և ոպպողիցիայի միջև մղվող վեճը վերաբերում է նրան, թե ազգաբնակության զանազան խավերը ի՞նչ չափերով պիտի մասնակցեն մեր յերկրի արդյունաբերության վերելքին:

Ոպպողիցան մասնավոր կապիտալիստական տնտեսությունն ու գյուղացիականը իրար հետ շփոթելով, գյուղացիության վրա դրվող հարկերի բարձրացման և արդյունաբերական ապրանքների գների ավելացման առաջարկ ե անում: Չնկատելով մասնավոր կապիտալիստական և գյուղացիական տնտեսության մեջ յեղած տարբերությունը, ոպպողիցիան առաջարկում է գյուղից մեծ քանակությամբ միջոցներ քաղաք բերել:

Մեր կուսակցությունն ասում ե.—մասնավոր կապիտալից հարկ պիտի վերցնել այնքան, վորքան հնարավոր ե, իսկ գյուղացիությունից այնչափ, վորպեսզի նա հնարավորություն ունենա շարունակելու և զարգացնելու իր տնտեսությունը: Ինչ վերաբերում է կուլակալին տնտեսությունների վրա հարկ գնելուն, ապա մեր հարկալին քաղաքականությունը ամենից շատ նրանց և հարկադրում: Կուլակալին տնտեսություններից պիտի վերցնել այն ամենը, ինչ հնարավոր ե: Սակայն մենք չենք կարող նույն կերպ մոտենալ միջակ տնտեսություններին:

Մենք պիտի բարձրացնենք մեր արդյունաբերությունն՝ որեցոր, աստիճանաբար ուժեղացնելով նրա զարգացումը: Այդ միակ ճիշտ քաղաքականությունն է և մենք այն կիրագործենք, յեթե հաստատ կերպով

առանց ընկճվելու և վհատվելու, աշխատանք կատարենք: Սակայն մենք կպայքարենք ոպպողիցիայի քաղաքականության դեմ, վորը առանց հաշվի առնելու մեր տնտեսական հնարավորությունները, խոսում ե արդյունաբերության զարգացման արագացման մասին: Ոպպողիցիան չի տեսնում ապագան, սխալ ե հաշվի առնում մեր ուժերն ու հնարավորությունները և դրա համար ել կործանիչ միջոցներ ե առաջարկում: Կուսակցությունը չի գնա ոպպողիցիայի ճանապարհով: Կուսակցությունը կշարունակի մեր տնտեսության հաստատ դեկավարման գործը, ապահովելով արդյունաբերության անընդհատ զարգացումը:

Կուսակցությունն ասում ե, վոր արդյունաբերության համար գյուղատնտեսությունից պիտի միջոցներ վերցնել ժողովրդական տնտեսության շահերին համապատասխան:

Կուսակցությունը առաջ կտանի գյուղացիությանը կենինի նշած ճանապարհով—կոռպերացիայի ճանապարհով: Կուսակցությունը չի մոռացել և չի մոռանա (ինչպես այդ անում է ոպպողիցիան) միջակ գյուղացիության շահերը: Կուսակցության բոլոր վորոշումները այդ նպատակն են հետապնդում: Միացյալ ուժերով մենք այդ քաղաքականությունը կիրագործենք: Կուսակցությունը վոչ մի քայլ չի նահանջի այդ ճանապարհոց—կենինի նշած ճանապարհոց:

ՄԱՍՆԱՎՈՐ ԿԱՊԻՏԱԼԻ ԴԵՐԸ

Ոպպողիցիան վախեցնում եր մեզ մասնավոր կապիտալի աճումով, վախեցնում եր ամեն տեսակի չեղալ դժբախտություններով: Մասնավոր կապիտալի մասին

տարածված հեքիաթները ցըելու համար, հերիք ե մի քանի թվեր բերել մեր ժողովրդական տնտեսության այն ճյուղից, ուր մասնավոր կապիտալը ամենից շատ ե իրեն զգացնել տալիս, այսինքն՝ առևտրի ասպարիզում: 1923—24 թվին մեծաքանակ առևտրի 22 տոկոսը գտնվում եր մասնավոր կապիտալի ձեռքին, իսկ 1925—26 թվին այդ տոկոսն իջնում ե՝ մինչև 9 տոկոս: Նույնը մենք նկատում ենք նաև մանրածախսի ասպարիզում: Յեթե 1923—24 թվին մանրածախս առևտրի 57 տոկոսը գտնվում եր մասնավոր կապիտալի ձեռքին, ապա 1925—26 թվին այդ տոկոսը իջնում ե 39 տոկոսի:

Մեր ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերում մասնավոր կապիտալի խաղացած դերը չնշին ե:

Վոչ թե մասնավոր կապիտալն ե մեզ կլանելու վտանգ սպառնում, այլ մենք ենք նրան սեղմելով, առևտրի ասպարիզից հեռացնում ուրիշ ասպարեզ, ուր նա կարող ե ավելի շատ լենթակա լինել մեր հսկողությանը:

ԱՊՐՈՆՔԱՅԻՆ ՍՈՎՆ ՈՒ ԳՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Ներկայումս ամենավտանգավորն այն լերեվութն ե, գների այն անհամաչափությունն ե, վոր գոյություն ունի գյուղատնտեսության և արդյունաբերության միջև: Յեթե լերկու տարի իրար հետեւից կրկնվող բերքը մեզ հնարավորություն տվեց գյուղատնտեսական մթերքների շուկան առողջացնել վորի հետեանքով գյուղատնտեսական ապրանքների գները ցածրացան, ապա մենք նույնը չենք նկատում արդյունաբերական ապրանքների գների նկատմամբ: Մենք չենք կարող պարձենալ արդյունաբերական ապրանքների գների իջեցումով: Ճիշտ ե, այսուեղ ել վորոշ հաջողություններ

ունենք: Յեթե անցյալ տարիները, մայիսի մեկից մինչև հոկտեմբերի մեկը, արդյունաբերական ապրանքների գների բարձրացում եր կատարվում, ապա այս տարի, նույնքան ժամանակամիջոցում, մենք կարողացել ենք վորոշ չափով իջեցնել այդ գները:

Ճիշտ ե արդյոք գների իջեցման մեր քաղաքականությունը: Ոպպողիցիան պնդում ե, վոր գների-բարձրացման քաղաքականություն պիտի տանել և վոչ թե իջեցման: Սակայն ոպպողիցիան հաշվի չի առնում, վոր բարձր գների քաղաքականություն տանել—նշանակում ե մերձենալ վոչ թե չքավորին, այլ կուլակին ու նեպմանին, քանի վոր թանկ ապրանքները անմատչելի կլինեն վոչ միայն չքավորի, այլ և միջակ գյուղացիների համար: Արդյունաբերական ապրանքների գները բարձրացնելով մենք չենք կարող բարձրացնել մեր գյուղատնտեսությունը: Արդյունաբերական ապրանքների գների բարձրացում—նշանակում ե բանվորա-գյուղացիական դաշինքի խզում, նշանակում ե մեր հեղափոխության պարտություն:

ՊՐՈՖՄԻՌԻԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Պրոֆմիությունների աշխատանքի արդյունքների և նրանց հերթական անելիքների մասին զեկուցեցընկ. Տոմսկին:

Ինչպես են աճում մեր պրոֆմիությունները:

1925 թվի ապրիլի մեկին, բոլոր ձեռնարկություններում, հիմնարկություններում և այլ հաստատություններում աշխատող բանվորների և ծառայողների

թիվը 6 միլիոնից անց եր. այս հաշվի մեջ չեն մտնում աշխատավորներում առանձին աշխատողները: 1926 թ. ապրիլի 1-ին բանվորների և ծառայողների թիվը բարձրանում է մինչև 7 միլիոն. ութհարյուր հազարի: Նույն ժամանակամիջոցում պրոֆմիությունների աճումը հետեւալ պատկերն է տալիս.—1925 թվի ապրիլի 1-ին պրոֆմիությունները ունեն 7 միլիոն անդամ. մի տարի անց, 1926 թվի ապրիլի 1-ին՝ 8 և կես միլիոն անդամ:

Ի՞նչու պրոֆմիությունների անդամների թիվը գերազանցում է ձեռնարկություններում և հիմնարկություններում աշխատողների թվին: Վորովինետև պրոֆմիությունների մեջ են մտնում նաև գյուղատնտեսական բանվորները, սեղոնով աշխատողները և պրոֆմիության շարքերում գտնված գործազուրկները: Ոպպողիցիան փորձում եր հաստատել, վոր պրոֆմիություններն աճում են բացառապես խորհրդացին ծառայողների հաշվին, վոր ներկայումս պրոֆմիության շարքերն են դիմում գլխավորապես վոչ պրոլետար տարրերը: Ոպպողիցիան ճիշտ չե: Այս տարվա ընթացքում արդյունաբերական բանվորների թիվը աճել է 24 տոկոսով, գյուղատնտեսական բանվորներինը՝ 80% ով և փոխադրողներինը՝ 22% ով, իսկ ծառայողների ընդհանուր թիվը աճել է միայն 19% ով: Այսպիսով, մենք տեսնում ենք, վոր պրոֆմիությունների կորիզը կազմում են արդյունաբերական բանվորները: Ուստի և սխալվում է ուզագողիցիան, յերբ ասում ե, վոր մեր պրոֆմիություններում գիրակշում են վոչ պրոլետար տարրերը:

Ի՞նչպես են աշխատում պրոֆմիությունները: Ի՞նչպես ե ընթանում պրոֆմիությունների անդամներին ակտիվ

աշխատանքի լծելու գործը: Հետեւալ թվերը պատասխանում են այդ հարցին. անցյալ տարի մենք ունեինք 30,000 ֆարբիկա-գործարանային կոմիտե, իսկ այս տարի՝ ունենք 56,000: Անցյալ տարի մենք ունեինք ընդամենը կոմիտեների 153,000 անդամներ, իսկ այս տարի 226,000: Անցյալ տարի համբարացին պատգամավորների թիվը հասնում էր 200,000-ի, իսկ այս տարի՝ 800,000: Այս տվյալներն ասում են, վոր հասարակական աշխատանքի յեն լծվում պրոֆմիության անդամների ավելի ու ավելի մեծ թիվ:

Գյուղում ակտիվ պատրաստելու տեսակետից, վորոշակի նվաճումներ ունի կատարած Գյուղանտառ Միությունը: Գյուղանտառի ստորին կազմակերպություններում, գյուղկոմներում ներկայումս հաշվում են 15,000 բատրակ և 7,000 հովիվ. շրջանային կոմիտեներում բատրակների և հովիվների թիվը հասնում է 9,000-ի, գյուղխորհուրդներում նրանց թիվը 3,000-ից անց ե, շրջգործկոմներում՝ 143, գյուղական փոխադարձ ողնության կոմիտեներում՝ 540: Իհարկե, այս թվերը Գյուղանտառի պես մեծ միության համար գեռ բավարար չեն: Սակայն նրանք շեշտում են, վոր առաջ ե քաշվում գյուղական ստորին ակտիվի նոր կազը:

Բանվորների ընդհանուր ակտիվությունը. վերջին շրջանում բարձրացել է: Առողջացել ու ամրացել ե նաև միությունների ֆինանսական գրությունը:

Աճել ե նույնպես բանվորուհիների թիվը պրոֆմիութենական զանազան կազմակերպություններում: Հետագայում պետք է բանվորուհիներին ավելի մեծ չափով առաջ քաշել ակտիվ աշխատանքի: Կուլտուրական աշխատանքի ասպարիզում ևս նվաճումներ կան. աճել

են «կարմիր անկյունների» և ավելի քիչ չափով՝ ակումբների քանակը։ Ակումբների վրա ավելի մեծ ուշադրություն պիտի կենտրոնացնել, նրանց աշխատանքը հետաքրքիր ու բովանդակալից դարձնել։

Արտադրական խորհրդակցությունները—ուր բան վորները սովորում են թե ինչպես պիտի ղեկավարեն արտադրությունը և վորոնց միջոցով նրանք իրենց հսկողությունն են ցուցաբերում,—ահա այդ արտադրական խորհրդակցությունների աշխատանքը ավելի լայնացել ու կենդանացել ե վերջին շրջանում։

Արտադրական խորհրդակցությունների աշխատանքն անհրաժեշտ ե ավելի լավացնել՝ ավելի մեծ թվով բանվորների մասնակից դարձնելով այդ աշխատանքին։ Միաժամանակ պիտի ուժեղացնել բանվորներին զանազան տնտեսավարական աշխատանքի համար առաջ քաշելու գործը։ Պիտի ուժեղացնել նաև բանվորների հսկողությունը արտադրության վրա։

Աշխատավարձի հարցով ել զբաղվեց կոնֆերենցիան։ Դեռ այս անցած գարնանից, ոպազողիցիան սկսել եր ճառել աշխատավարձի բարձրացման մասին, զբաղվելով ավելորդ դեմագոգիայով։ Առանց նկատի առնելու պետության տնտեսական հնարավորությունները, աշխատավարձի մասին ճառելով, ոպազողիցիան աշխատավարձի բարձրացման-բարձրացման եր գոռում՝ բանվորներին իր կողմը զբավելու, նրանց գուր գալու և իր սիալ տեսակետները սաղացնելու համար։ Այս անցած գարնանը մենք չեցինք կարող աշխատավարձը բարձրացնել, քանի վոր յերկրի տնտեսական դրությունը մեզ հնարավորություն չեր տալիս այդ անելու։ Յեթե այս անցած գարնանը աշխատավարձը բարձրացնելինք, ապա այդ ան-

խուսափելիորեն կազդեր գների բարձրացման վրա, կզցեր չերվոնեցի արժեքը, վորն իր հերթին կանդրադառնար աշխատավարձի հետագա իջնելուն։ Բայց հետագայում, յերբ արդեն պարզվեց, վոր այս տարվա բերքը լավ ե, վոր աշխատանքի արտադրողականությունը գնալով բարձրանում ե, կուսակցությունն առաջազրեց աշխատավարձի բարձրացման հարցը։ Այդ հարցը քննվեց մոտ յերկու ամսից ավել, և այդ հասկանալի յե, քանի վոր բազմակողմանի ու մանրամասն մոտեցում եր պետք, բոլոր տվյալներն ուսումնասիրելն ու քննելը անհրաժեշտ եր։ Այդ ամենի հետևանքով, վերջին շրջանում բարձրացվել ե բանվորական այն խմբերի աշխատավարձը, վորոնք հետ ելին մնացել մյուս խմբերից։ Մեր տնտեսական ոեալ հնարավորություններից յելնելով, կուսակցությունը տեղին ու ժամանակին լուծեց աշխատավարձի հարցը։

Հիմա տեսնենք թե ինչպես ե դրվում գործազուրկների հարցը։ Բնորոշն այն ե, վոր մեր գործազուրկների մեջ չկան արտադրությունը լավ ճանաչող, վորակալ մասնագետ բանվորներ։

Այն կարծիքը, վոր իրը թե գյուղերից գլխավորապես չքավորությունն ե քաղաք գալիս, ճիշտ չե։ Գյուղական ներկա յերիտասարդությունը վերջին տարիների ընթացքում կուլտուրապես աճել ե։ Գյուղը նրան չի քավարարում, նա թողնում ե գյուղական կյանքը և գալիս քաղաք, ուր պատրաստ ե ամեն մի աշխատանք կատարել։ Այդպիսիները միայն չքավորներ չեն, դրանց մեջ քիչ չեն միջակները և անզամ ունեորները։

Առանձին նշանակություն ե ստանում բանվորների յերեխաների և ընդհանրապես քաղաքի յերիտասար-

դության մեջ նկատվող գործազրկությունը։ Մեր բոլոր
արդյունաբերական կենտրոններում շատ սուր կեր-
պով դրած ե անչափահաս ու յերիտասարդ գործա-
զուրկների հարցը, վորոնց մեր արդյունաբերությունը
չի կարող տեղափորել։ Նորից կրկնում ենք, վոր մեր
գործազրկության հատկանիշ կողմն այն ե, վոր նա
գոյություն ունի տնտեսության ու բանվոր դասա-
կարգի քանակի աճմանը զուգընթաց։ Կուսակցությունն
ու Խորհրդային իշխանությունը ամեն հնարավոր
միջոց ձեռք են առնում գործազրկության դեմ պայ-
քարելու համար։ Այստեղ վոչ միայն արդյունաբերու-
թյան, այլ և գյուղատնտեսության զարգացումը մեծ դեր
են խաղալու։

Այս բոլորին զուգընթաց պետք է հատուկ ուշադրու-
թյուն դարձնել պրոֆմիությունների կուսակցական
դեկավարության հարցի վրա։ Բջիջի և տեղկոմի միջն
պիտի հաստատել 14-րդ համագումարի նշած փոխհա-
րաբերության և դեկավարության ճիշտ ձևերը։ Պրոֆ-
միութենական շարժման ասպարիզում մենք հսկա-
յական նվաճումներ ունենք։ Խորհրդային իշխանու-
թյան որոք, անցած իննը տարում մենք ստեղծել ենք
աշխարհում չտեսնված պրոֆմիութենական ուժեղ շար-
ժում, վորի, մոտ յերկու միլիոնի հասնող ստորին ակ-
տիվը անցած ամրող շրջանում առաջ ե ընթացել կու-
սակցության հետ ձեռք-ձեռքի տված, նրա հետ միասին
կառուցել ե Խորհրդային իշխանությունը, նրա հետ
միասին կառուցում ե սոցիալիզմ, և նրա հետ միասին
կավարտի սոցիալիզմի կառուցման գործը։

ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻԱՍ- ՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ինչպիսի՞ շրջան ենք մենք հիմա ապրում։ Մի
կողմից պայքար ե տեղի ունենում կապիտալիստական
յերկրների և մեր յերկրի միջև, մյուս կողմից՝ դարձյալ
պայքար ե տեղի ունենում մեր յերկրի ներսում, ոնտե-
սության սոցիալիստական ու կապիտալիստական տար-
բերի միջև։ Նեպմանի, մասնավոր առևտրականի և կու-
լակի դեմ մղվող տնտեսական պայքարը, — մեր յերկրի
կապիտալիստական տարբերի դեմ մղվող պայքարն եւ

կուսակցությունը տեսնում է իր առաջ կանգնած
բոլոր դժվարությունները և հնարավորություն ունի
հաղթահարելու գրանք։ Միլիոնավոր բանվորների ակ-
տիվ ոժանդակությամբ, կուսակցությունը վերացրել է
ու կվերացնի բոլոր դժվարությունները, շարունա-
կելով սոցիալիզմի հաղթական ճանապարհ։ Սակայն,
ինչպես հայտնի յե, մեր կուսակցության վոչ բոլոր
անդամներն են հավատում մեր հետագա հաղթական
ընթացքին, սոցիալիզմի կառուցման հնարավորությանը։
Կուսակցության վորոշ անդամներ, վորոնք շատ չնցին
թիվ են կազմում, վախ հայտնաբերեցին մեր առաջ
կանգնած դժվարությունների հանդեպ, տատանվեցին
ու շեղվեցին հիմնական, իսկական ճանապարհց։ Հենց
այդտեղից ել ծայր ե առնում ոպպոզիցիայի յելութը.
այդտեղից ե սկսվում մի խումք ոպպոզիցիոն ընկերների
առանձին տեսակետների ձևակերպումը։

Կոնֆերենցիայում ոպպոզիցիայի ծրագրի ու նրա
առաջարկների մասին զեկուցում արեց մեր կուսակցու-

թիան կենտկոմի գլխավոր քարտուղար՝ ընկ. Ստալինը: Կուսկոնֆերենցիան միաձայն դատապարտեց ոպպողիցիալին: Կուսակցական կոնֆերենցիան ասաց, վորինչպիս 1917 թվին, իշխանությունը գրավելու ժամանակ ընկ. ընկ. Կամենեվը ու Զինովյեվը տատանվեցին, իսկական ճանապարհից շեղվեցին, այնպես և է հիմա, 1925—26 թվին, յերբ մեր առաջ նոր դժվարություններ կանգնեցին, նրանք կրկին տատանվեցին: Հիմա, յերբ մենք լայնորեն ձեռնարկել ենք սոցիալիզմի շինարարությանը, այդ ընկերները տատանվեցին, նույնը յեղավ և 1917 թվին, յերբ հեղափոխության առաջին շրջանից, բուրժուական հեղափոխությունից, կուսակցությունը անցնում եր նրա յերկրորդ շրջանին—սոցիալիստական հեղափոխության: 1917 թվին կուսակցությունը, Լենինի գլխավորությամբ, ամենախիստ կերպով դատապարտեց այդ ընկերներին: Ներկայումս ել կուսակցությունը ամենախիստ կերպով դատապարտեց նրանց, մասավանդ, վոր նրանք այս անգամ Տրոցկու հետ միացած են պայքարում Լենինյան կուսակցության կենտկոմի դեմ: Տրոցկին 15 տարի շարունակ պայքարել ե մեր կուսակցության դեմ, անվերջ մենշևիկյան թեքումներ ու տատանումներ հայտնարերելով: Նույնիսկ Հոկտեմբերից հետո ել, մեր շարքերն անցնելուց հետո ել, նա պայքարել է Լենինի դեմ. (Բրեստի հաշտությունը, պրոֆմիությունների մասին յեղած դիսկուսիան):

Կուսակցության ամեն մի անդամի պարտականությունն ե ցույց տալ ոպպողիցիալի աշխատանքի ամբողջ վասակարությունը, նրա տեսակետների կործանարար լինելը:

Ի՞նչ ե ասում կուսակցությունը: Նա ասում ե, վոր

Հոկտեմբերյան Հեղափոխությունը արևմուտքի սոցիալիստական հեղափոխության համար միայն ազդանշան չե, ինչպես այդ կարծում ե ոպպողիցիան: Հոկտեմբերյան Հեղափոխությունը, միջազգային հեղափոխության ազդանշանը, սկիզբը լինելով, միաժամանակ նույն միջազգային հեղափոխության զարգացման ու ծավալման ամուր հենարանն ե: Կուսակցությունը գտնում ե, վոր ձեռքներս ծալած չսպասելով միջազգային հեղափոխությանը, մենք կարող ենք և պետք ե սոցիալիզմ կառուցենք Խորհրդային Միության մեջ: Մենք այդ կարող ենք անել մեր հեղափոխության ներքին ուժերի վրա հենված, գյուղացիության նկատմամբ ճիշտ քաղաքականություն վարելով: Միաժամանակ անհրաժեշտ ե, վոր միջազգային հեղափոխական պրոլետարիատը այնչափ ուժ ունենա, վորպեսզի կարողանա հոգս ցնդեցնել, քանզել իմպերիալիստների ուազմական հարձակումների (ինտերվենցիա) ծրագրերը՝ մեր յերկիրը զերծ պահելով ինտերվենցիայի վտանգներից:

Տրոցկի գմը (և ամբողջ ոպպողիցիան, վորն անցել ե տրոցկիզմի կողմը) մեր հեղափոխության այս հիմնական հարցերի մասին բոլորովին ուրիշ տեսակետ ունի: Ըստ տրոցկիզմի՝ գուրս ե գալիս վոր մեր հեղափոխությունը արևմուտքի սոցիալիստական հեղափոխության համար միայն ազդանշան ե, նրա նկատմամբ մի զորեղ շարժիչ ուժ ե: Ոպպողիցիան ասում ե, վոր յեթե համաշխարհային հեղափոխությունը դանդաղի, ամենամոտ ապագայում չհաղթանակի, ապա մեր յերկրի պրոլետարական իշխանությունը կամ պիտի կործանվի և կամ վերասեռվի: Վորովհետեւ, ըստ ոպպողիցիայի,

անխուսափելի յէ պրոլետարիատի և գյուղացիության ընդհարումը:

Լենինն ասել է, վոր Խորհրդային Միության մեջ մենք ունենք «բոլոր անհրաժեշտ ու բավարար պայմանները՝ սոցիալիստական հասարակակարգ կառուցելու և այդ կառուցումը ավարտելու համար»։ Տրոցկին ասում է, վոր «Ռուսաստանում սոցիալիստական տնտեսության իրական վերելքը հնարավոր է միայն Յեվրոպայի կարևորագույն յերկրներում պրոլետարիատի կատարած հաղ թանակից հետո»։

Լենինն ասել է.—«Տասըշքսան տարի ճիշտ փոխարաբերություն սահմանել գյուղացիության նկատմամբ, և մեր հաղթանակն ապահոված է համաշխարհային մասշտաբով»։ Տրոցկի զմն, ընդհակառակը, յելնում է նրանից, վոր մինչև համաշխարհային հեղափոխության հաղթանակը պրոլետարիատը չի կարող ճիշտ հարաբերություն սահմանել գյուղացիության նկատմամբ, և վոր պրոլետարիատը, իշխանությունը վերցնելուց հետո, թշնամական ընդհարումներ կունենա վհչ միան բուրժուազիայի, այլ և գյուղացիության հետ։

Կոնֆերենցիան արձանագրեց, վոր Տրոցկու և նրա համախոհների այդպիսի տեսակետները և վոչ մի կապ չունեն մեր կուսակցության ու լենինիզմի հետ։ Կոնֆերենցիան շեշտեց, վոր ոպպոզիցիայի այդ տեսակետները վոչ այլ ինչ են, յեթե վոչ սոցիալ-դեմոկրատական (մենշևիկյան) թեքում։

Ոպպոզիցիան սխալ կարծիք ունի գյուղացիության նկատմամբ։ Ըստ ոպպոզիցիայի, դուրս ե գալիս վոր գյուղացիության հիմնական մասը կազմող միջակները

պրոլետարիատի համար նույնպիսի թշնամական տարր են հանդիսանում, ինչպես կուլակները։

Լենինն ասել է.—«Մեր դիկտատուրայի գերազույն սկզբունքը—պրոլետարիատի և գյուղացիության դաշտնքի պահպանումն է, վորպեսզի պրոլետարիատը կարողանա պահպանել իր ղեկավար դերն ու պետական իշխանությունը»։ Կուսակցությունը գտնում է, վոր պրոլետարիատը կարող է և պետք է լինի գյուղացիական հիմնական մասսայի ղեկավար՝ եկոնոմիկայի, սոցիալիզմի շինարարության ասպարիզում, այնպես, ինչպես նա 1917 թվի հոկտեմբերին յեղել է գյուղացիության ղեկավարը քաղաքականության, բուրժուազիայի իշխանությունը տապալելու խնդրում։ Կուսակցությունը գտնում է, վոր մեր յերկրի ինդուստրիալիզմի գլուխ կգա միայն այն գեպքում, յեթե աստիճանաբար բարելավվի գյուղացիության խոշորագույն մասի՝ չքավորների և միջակների տնտեսական դրությունը։ Դրա համար եւ կուսակցությունը հարկերի ու գների այնպիսի տնտեսական քաղաքականություն և կիրառում, վորն ամրացնելով արդյունաբերության ու գյուղատնտեսության սերտ կապը, միաժամանակ պահպանում ու ամրացնում է բանվոր դասակարգի և գյուղացիության հիմնական մասսայի դաշինքը։

Այս ամենին ոպպոզիցիան ուրիշ աչքով է նայում։ Նա գյուղացիության հարցում բոլորովին հեռանում է լենինիզմի ունեցած հիմնական գծից։ Ոպպոզիցիան սոցիալիստական շինարարության գործում գյուղացիությունը դիտում է վոչ վորպես պրոլետարիատի դաշնակցի։ Այստեղից յելնելով, ոպպոզիցիան տնտեսական ու ֆինանսական այնպիսի միջոցներ է առաջարկում,

վորոնք կարող են խզել քաղաքի և գյուղի կապը,
իսախտել բանվոր դասակարգի և գյուղացիության դա-
շինքը և այդպիսով իսկական ինդուստրիալիզացիայի
ամեն մի հնարավորություն ի չիք դարձնել։ Ահա դրա
համար ել, կոնֆերենցիան ասաց, վոր գյուղացիության
նկատմամբ ոպպոզիցիայի առաջարկած քաղաքականու-
թյունը չի համապատասխանում մեր լերկրի և պրոլե-
տարիատի դիկտատուրայի շահերին։

Կոնֆերենցիայի բանաձեռ խիստ կերպով դատապար-
տում ե ոպպոզիցիայի՝ կուսակցության շարքերը պառակ-
տելու փորձերը, վոր նպատակ ունեին կենտկոմի և ամ-
բողջ կուսակցության հեղինակությունը զցել և բոցնի-
կան շարքերի լենինյան միասնականությունը խախտել։
Կուսակցության շինարարության հերթական խնդիր-
ներն են։—

Պահպանել կուսակցության միասնականությունը։
Վճռական պայքար մղել մեր կուսակցության
մեջ լերևան լեկած սոցիալ-դեմոկրատական թեքման
դեմ՝ մասսաներին պարզաբանելով ու բացարելով
ոպպոզիցիայի տեսակետների սխալ լինելը։

Ամեն ջանք գործ դնել, վոր ոպպոզիցիան ընդունի
իր սկզբունքային սխալները։

Ուժեղացնել կուսակցության միասնականությունը՝
պառակտողական աշխատանքի վերսկսման ու կուսակ-
ցության դիսցիպլինան խախտելու բոլոր փորձերը
իրենց բնում խեղդելով։

ԿԱՄ ԼԵՆԻՆԻ ՀԵՏ ԿԱՄ ՆՐԱ ԴԵՄ

Կոնֆերենցիայում ոպպոզիցիան ապարդյուն տեղը
փորձեց ցուց տալ, վոր իրը ինքը սոցիալ-դեմոկրատական

թեքում չունի, վոր կուսակցության այդ մեղադրանքը
իրը անհիմն ե։ Ոպպոզիցիայի լերեք գլխավոր միուների
արտասանած ճառերը լեկան միայն հաստատելու, վոր
իսկապես նրանք հեռացել են լենինիզմից։

Նա, ով ասում է, թե մեր լերկրում սոցիալիզմ չի
կարելի կառուցել, անխուսափելիորեն գլորվում է մեն-
շեկիների գիրկը, կրկնում նրանց բամբասանքները։
Ոպպոզիցիայի ծրագիրը, իր ցանկությունից անկախ,
մենշեկիների պես պրոլետարիատին հետ և տանընը,
անվստահություն և վհատություն և առաջացնում մեր
գործի վերջնական հաղթանակի նկատմամբ։ Ոպպոզի-
ցիան իրեն կորցնում է բուրժուազիայի առաջ, այստեղից
ել հաշիվները խառնում են և սխալ առաջարկներ անում։

Ի՞նչ կապ ունի այս ամենը լենինի հետ։ Ի՞նչ կապ
ունի բոցնիզմի հետ։ Յեկ վհչ մի կապ։

Իզուր տեղը և պատահական չե, վոր ոպպոզիցիան
գյուղացիությունը դիտում է, վորպես անհուսալի մի
դաշնակցի՝ ասելով.—այդ ի՞նչ դաշնակց ե և ի՞նչպես
կարելի լե նրա հետ միասին կառուցել սոցիալիզմ։ Այս-
տեղից ել ծայր են առնում կուլակի չափազանցումը,
կուլակային վտանգը, միջակին մոռանալը, միջակին
պրոլետարիատի դաշնակց չհամարելը, միջակին բուր-
ժուազիային և կուլակներին հանձնելը։ Ի՞նչ կապ ունի
այս ամենը լենինի հետ, վորն ասել ե՝ միջակի հետ
ամուր գաշինք պետք ե ստեղծել, նրան կոռպերացիայի
միջոցով կազմակերպել, սոցիալիստական տնտեսու-
թյան հետ կապել։

Ոպպոզիցիան իզուր տեղը չե, վոր հույս չի դնում
գյուղացիության վրա, իզուր տեղը չե, վոր չափա-
զանցնում է կուլակի աճումն ու նրա վտանգը։ Կուլակի

ծալրահեղ աճման մասին բարձրացրած վախասունը ոպ-
պողիցիալին պետք է նրա համար, վորպեսզի ալդպիսով
սքողի միջակի և կոռպերացիալի հարցերը. Այդ ամենը
սպառպիցիան անում է իր վախը, մենշեփկան իր տա-
տանումները, իր պարտվողականությունը, բանվոր դա-
սակարգի և գյուղացիության նկատմամբ ունեցած իր
թերահավատությունը ծածկելու համար:

Հենց այդ ամենի համար Լենինը 1917 թվին անողոք
կերպով մերկացրեց կամենեվին ու Զինովյեվին, չերք
նրանք Հոկտեմբերյան Հեղափոխության անկումն ելին
գուշակում և միայն վորոշ ժամանակից հետո ճանա-
չեցին հեղափոխությունը:

Այն ժամանակ Լենինը հատուկ նամակով կուսակ-
ցությանը դիմելով, շեշտեց այդ ընկերների «ամսթա-
լի տատանումների» մասին: Իսկ Տրոցկու դեմ Լենինն
ու կուսակցությունը պայքարել են ամրող 15 տարի՝
նրա մենշեփկան տատանումների ու թեքումների համար:
Տրոցկին միշտ ել յեղել և բոլշևիկների ու մենշեփկների
մեջ տեղը. հաճախ մենշեփկների կողմն ե անցել, և
միայն իմպերիալիստական պատերազմի և Հոկտեմբերյան
Հեղափոխության ժամանակ բոլշևիկների կողմն անցավ,
այն ել նրանից հետո շարունակել և պայքարը Լենինի
դեմ զանազան հարցերում:

Հիմա նորից ե սկսվել տատանումը: Տատանում
դեպի մենշեփկների կողմը: Մի տատանում, վորի առ-
թիվ միջազգային բուրժուազիան ու նրա լակեյները
չտեսնված կերպով ուրախացան, հույս դնելով կուսակ-
ցության շարքերի պառակտման ու թուլացման վրա:
Տրոցկին, Զինովյեվը ու կամենեվը ժամանակին խելա-
ցիորեն հրաժարվեցին ֆրակցիոն աշխատանքից: Հիմա

նրանց մնում է հրաժարվել իրենց սկզբունքային սխալ-
ներից՝ ազատվելով մենշեփկների գիրկն ընկնելու
վտանգից: Կամ Լենինի հետ պիտի գնալ, կամ նրան
դեմ պիտի լինել: Այս հարցում վոչ մի կեղծիք և վոչ մի
յերկուություն կուսակցությունը չի կարող հանդուրժել,
չի կարող տանել:

Սոցիալիստական շինարարության ճա-
նապարհին յեղած դժվարությունները կու-
սակցությունը հաղթահարել ե ու կհազվա-
հարի իր յերկաթյա միասնական ու միա-
ծույլ շարքերով: Լենինի ցույց տված ճա-
նապարհից կատարվող ամեն մի տեսակի
թեքման դեմ նա վճռական պայքար կմղի
առանց վորեե տատանումների, հաստատ ու
վճռական, շարունակելով բանվոր դասա-
կարգի մեծ գործը: Այս բանում նրան ամ-
բողջությամբ ոժանդակում և պաշտպանում
են բոլոր յերկրների կոմունիստական կու-
սակցությունները, ամբողջ կոմունիստա-
կան ինտերնացիոնալը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

XV	Կոնֆերենցիայի նշանակությունը	3
Միջազգային դրությունը	8	
Ի՞նչպես ենք կառուցել և ի՞նչպես պիտի կառուցենք մեր տնտեսությունը	16	
Պրոֆմիությունների աշխատանքը	37	
Լենինյան կուսակցության միասնակա- նության համար	43	



ԽՈՐՀԻՄՈՅԻՆ ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ
ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

— ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ —
Մոսկվա, Նիկոլսկի փող. № 10.

-
- ի. ԱՏԱԼԻՆ—Գյուղացիական հարց: Գինը 50 կոպ.
 - ի. ԱՏԱԼԻՆ—Ազգային հարց: (Տպագրվում է):
 - վ. ԼԵՆԻՆ.—Պատգամներ յերիտասարդության: Գ. 15 կ.
 - Ն. ԲՈՒԽԱՐԻՆ—Սոցիալիզմի ուղին և բանվորագյու-
ղացիական դաշինքը: Գինը 1 ռ. 25 կ.
 - ի. ՖԼԵՐՈՎՍԿԻՅ—Մեր առաջին բանվ. գյուղ. հեղա-
փոխությունը: Գինը 70 կոպ:
 - Ն. ԿՐՈՒՊՈՎԱՅՐԱ—Լենինի պատգամները ժողովրդական
լուսավորության մասին: Գինը 20 կոպ.
 - ԼԱՎՐԵՆՏԻԵՎ—Ինչպես աշխատացնել խորհուրդները:
Գինը 30 կոպ.
 - ԶԱՎՈՐՍԿԱՅԱ—Կլարա Ցետկին (Կենսագր.) Գ. 10 կ.
 - Ն. ՏՈՒՐՅԱԿՈՒԼՈՎ—Ազգային հարցը և դպրոցը: Գ. 40 կ.
 - Բ. ԺԱՎՈՐՈՆԿՈՎ—Հասարակագիտությունը 1 աստի-
ճանի դպրոցում: Գինը 65 կոպ.
 - Ն. ԵԼԻԶԱՐՈՎ—Ի՞նչ վորոշեց կուսակցության XIV
համագումարը: 112 եջ, գինը 30 կոպ.
 - Ա. ԴՄԻՏՐՅԵՎԱ—Տգիտությունը յեզ սնահավատու-
թյունը: Գինը 15 կոպ.
 - Մ. ԼԻՎԵՆՍԿԻ—Գյուղատնտեսական հարկ: Գինը 20 կ.
 - ՅԵՍԻՊՈՎ—Գյուղացիության պահանջները և խորհր-
դային դպրոցի ծրագրները: Գինը 12 կոպ.

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

- Ա. Լ.—ԳԵՂՋԿՈՒԺԻՆ և յերեխաները: Գինը 30 կ.
Պ. ՎԼԱՍՈՎ—Հողի մշակումը յերաշտի ժամանակ: 40 կ.
Ի. ՑՈԶԵՖՈՎԻՉ—Գյուղ կանգնի գերան կկոտրի (կոռպերացիան գյուղում): Գինը 30 կոպ.
Ի. ՊՈԴՅՈՎՈԼՍԿԻ—Աստծու կամքը թե՞ գյուղատնտեսական գիտությունը: Գինը 20 կ.
Ա. ԿՐԱՎՉԵՆԿՈ—Թե ինչպես կարելի լե գյուղում ելեքտրականություն անցկացնել: Գինը 15 կ.
Ն. ՌՈՒԴԻՆ—Գյուղացիական հողաշինարարության այլուրենը: Գինը 30 կ.
Պ. ԼԻԽԱԶՈՎ—Խոզը գյուղացու կերակրողնե: Գինը 18 կ.
Ն. ԲՐԱՌԻԴԵ—Թե ինչպես գերմանացին ստիպեց, վոր կովը տարին յերկու անգամ ծնի: Գինը 15 կ.
Ա. ՍԿՈՄՈՐՈԽՈՎ—Ինչպես ընտրել կաթնառատ կով: Գինը 12 կոպ.
Ա. ՍԿՈՄՈՐՈԽՈՎ—Առաջին ոգնությունը հիվանդ կենդանուն: Գինը 17 կոպ.
Ա. ԲՐԱՆՍԲՈՒՐԳ—Ըստանի կենդանիների վարակիչ հիվանդությունները: Գինը 17 կ.
Ն. ՍԵՄԱՇԿՈ—Թոքախտ (նկարագարդ): Գինը 25 կ.
Բ. ԳԻՆՍԲՈՒՐԳ—Յերեխաների վարակիչ հիվանդությունները: Գինը 30 կ.
Վ. ԲՐՈՆՆԵՐ—Վեներական ախտեր (նկար.) գինը 25 կ.
ԲԺ. ՆԱԴԵՅԻՆ—Քոս, և ինչպես կովել նրա դեմ: 10 կ.
Ա. ՍՊԵՐԱՆՍԿԻ—Մոր այբբենարանը: Գինը 16 կոպ.
Ն. ՍԵՄԵԿԻՆ—Արել, նրա վորդիները և թոռները: Գինը 40 կ.
Վ. ՑԱԶՎԻՑԻՅՅԻՉ—Մարդկային բնակարանի պատմութ. Գինը 15 կ.

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

- Դ. ԳՐԱՎԵ—Ի՞նչպես սարքված տիւեղերը: (49 նկ.): Գինը 35 կ.
ԳՐԵՄՅԱՑԿԻՅՅԻՉ—Վորոտ, կայծակ և յելեքտրականություն: Գինը 40 կ.
ԳՐԵՄՅԱՑԿԻՅՅԻՉ—Ինչպես և առաջացել կյանքը յերկրի վրա: Գինը 35 կ.
ԱԳՈԼ—Կենդանիների և մարդու ծագումը Գինը 35 կ.
Գ. Վ.—Մարդու անտեսանելի թշնամիներն ու բարեկամները: Գինը 10 կ.
Մ. ԳՈՐԿԻՅՅԻՉ—Յերիտասարդ գրողը: Մարդը: Գինը 15 կ.
Ա. ՍԵՐԱՖԻՄՈՎԻՉ—Պատմվածքներ: Գինը 40 կոպ.
Դ. ՄԱՄԻՆ-ՍԻԲԻՐՅԱԿ—Մոծակի և արջի մասին: (Նկարագարդ): Գինը 15 կոպ.
Պ. ՈՐԼՈՎԵՅՅԻՉ—Ճամբորդություն այերոպլանով: (Նկարագարդ): Գինը 22 կոպ.
Պ. ՈՐԼՈՎԵՅՅԻՉ—Քիմիկոս կուզկան: (Նկար.) գինը 28 կ.
Ա. ԿՈՒՊՐԻՆ—Յերկրի խորքերում: (Նկար.) գինը 15 կ.
Ա. ՆԵՎԵՐՈՎ—Ինչպես ելին ապրում տիկնիկները և ինչ արեց արձիճե զինվորը: (Նկար.) գինը 16 կ.
Ա. ԿՐԱՎՉԵՆԿՈ—Ինչպես Սաքոն կարմիր բանակաչին դարձավ: Գինը 35 կ.
Ձ. ՑՈՐԲՍ—Մինիստր մեկ ժամով: (Նկար.) Գինը 18 կ.
ՁԵ. ՌԱԴԻՆ—Պիոներ, պահպանիր առողջությունդ: Գինը 10 կ.
Պ. Ո.—Պատանի պիոներ: (Ժողովածու): (Նկարագարդ) Գինը 60 կ.
Պ. ԽԼԵԲՆԻԿՈՎ—Կարմրամորթները (Հյուս. Ամերիկայի հնդիկների կյանքից): Գինը 45 կ.
ԵԴՄ. ԴԱՄԻՉԻՄ—Անձնվեր տղան: Գինը 10 կ.

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՈՒՅԴՆԱ—Փոքրիկ հերոսուհին: Գինը 10 կ.

ԹՌՉՈՒՆՆԵՐ, գունատիպ այլբոմ մանուկն, համար:

Գինը 20 կ.

ՅԱՅԼԿՆԵՐ—Լինինք առողջ և ուժեղ, մաս I, 41 նկարով:

Գինը 35 կ.

» » » » մաս II, 38 նկարով:

Գինը 35 կ.

ԼԵՆԻՆԻ ՊԱՏԳԱՄՆԵՐԸ—Պիոներների որենքներն են.

Գինը 15 կ.

Քաղաքական զրուցներ կոմիերիտականի համար, մաս I.

Գինը 50 կ.

» » » մաս II.

Գինը 50 կ.

» » » մաս III.

Գինը 50 կ.

ՌԵԿԼԻՆ—Խոչ վորոշեց կուսակցության XV կոնֆե-

րենցիան: Գինը 20 կ.




Դիմել Կենտրոնական Գիտական
Յերեան, Հայաստանի Պետհրատին:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրա-



FL0001579

Ку



ԳՐԱԸ 20 ԿՈՊ.

104.



Г. РЫКЛИН.

Что постановила
XV партконференция.

На армянском языке.

Центральное Издательство Народов Союза С. С. Р.

Москва.

Никольская. 10.